

# ՄԱՐԶԻԿ

հսկս

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

32րդ ՏԱՐԻ, 2013, ԹԻԻ 3 (369) - VOL. XXXII N° 3

السنة الثانية والثلاثون - العدد رقم 3







# ԹԻՒՆԻՆ ՆԻՒՆԵՐԸ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزیک مجلّة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ


32ԴԴ ՏԱՐԻ, 2013, ԹԻՒ 3 (369)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Սեդա Պէշլեան (Լիբանան),  
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),  
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.  
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան  
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան  
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ  
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Գրիգորիս Պողարեան  
 Աբօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում - Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ  
 Պուրճ Համուտ, Գինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

### ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատակաճառի սակն է 4000 Լ.Ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ճշդուած է 48000 Լ.Ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$70,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



16

### Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ


- Խմբագրական 2
- Պատգամ 3
- Անդրադարձ 5
- Մեր Տեսակցութիւնները 9
- Պատմութիւն 11
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 16



33

### ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 14
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



26



36



# ՄԻՇՏ ՊԷՏՔ Է ՊԱՏՐԱՍՏ ԸԼԼՎ ԲԱՐՁՐԱՆԱՎՈՒ ԵՒ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ  
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝  
ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ)

**Տ**արիներու գեղեցիկ աւանդու-  
թեամբ, դարձեա՛լ հաւաքուած  
ենք բոլորս՝ վայելելու համար  
Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի ընտանի-  
քին Մայիսեան փառատօնը:  
Այս տարի, սակայն, փառատօնը ունի յատուկ  
նշանակութիւն, որովհետեւ ան նուիրուած է  
միութեան 95-ամեակին:

Ժողովուրդներու պատմութեան մէջ հազ-  
ազիւտ են մարզական այն միութիւնները,  
որոնք 95 տարի գոյատեւած են իրենց հիմնա-  
կան առաքելութեամբ:

Մանաւանդ մեր օրերուն, երբ մարզական  
միութիւնները, քիչ բացառութեամբ, վերած-  
ած են գործարար ընկերութիւններու, իսկ  
մարզիկները՝ վճարովի արհեստաւորներու:

Մեզի նման փոքր ու աշխարհի տարածքին  
սփռուած ժողովուրդի մը մէջ, հրաշքի համագոր բան է 95  
տարի մարզական միութիւն մը պահելը եւ թիւով ու որակով  
տեւաբար յառաջդիմելը: Իսկ այդ հրաշքը մենք կը պարտինք  
մեր սքանչելի ժողովուրդին, որուն համար Հ.Մ.Ը.Մ.ը եղած է  
ու կը մնայ սերունդներու փրկու-  
թեան լաստը, մարզական առողջ մի-  
ջավայրը, սկառտական ազնիւ ըս-  
կզբունքներու դարբնոցը, մէկ խօս-  
քով՝ մարդակերտումի եզակի կեդրո-  
նը:

Մարզանքն ու սկառտութիւնը  
որպէս միջոց ունենալով, Հ.Մ.Ը.Մ. 95  
տարի շարունակ իրեն դիմող սե-  
րունդներուն փոխանցեց ինքնավրս-  
տահութիւն, արժանապատուութեան  
զգացում եւ ազգային պատկանելիու-  
թեան գիտակցութիւն, այլ խօսքով՝  
ան հայկականութեան ազգային կնի-  
քով դրոշմեց երիտասարդ սերունդ-  
ներ, Հ.Մ.Ը.Մ.ը դարձնելով, համա-



**Մարզանքն ու սկառտ-  
տութիւնը որպէս միջոց ու-  
նենալով, Հ.Մ.Ը.Մ. 95 տա-  
րի շարունակ իրեն դիմող  
սերունդներուն փոխան-  
ցեց ինքնավստահութիւն,  
արժանապատուութեան  
զգացում եւ ազգային  
պատկանելիութեան գի-  
տակցութիւն:**

զաղութային եւ համահայկական մեծ ընտանիք, կամուրջ՝  
զաղութէ զաղութ եւ զաղութներէ հայրենիք:

Հ.Մ.Ը.Մ.ի կամրջող միութիւն մը ըլլալու փաստը կու տան  
համահայկական անոր նախաձեռնութիւնները, որոնք կ'իրա-  
գործուին մեծ յաջողութեամբ: Արդա-  
րեւ, երկու ամիս առաջ, միութիւնը  
Կիպրոսի մէջ կատարեց միջ-վարչա-  
կան դիւաններու իր Ց-րդ խորհրդա-  
ժողովը, միութեան դրօշին տակ հա-  
մախմբելով աշխարհասփիւռ կառոյցի  
իր պատասխանատուները: Յուլիսին,  
Երեւանի մէջ կը կատարուին համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը,  
որոնք այս անգամ քով-քովի կը բերեն  
միութեան մարզական թելին մեծա-  
թիւ ներկայացուցիչները: 2014-ի ամ-  
բան, կ'իրագործուի համա-Հ.Մ.-  
Ը.Մ.ական 10-րդ բանակումը, ուր  
Արագածի լանջին սկառտներ յիշա-  
տակելի 10 օրեր կ'անցընեն ազգային-

միութենական դաստիարակութեան խանդավառ մթնոլորտի մէջ: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ 95-ամեայ երթը, իր մասնակցութիւնը բերելով նաեւ Հայկական Յեղասպանութեան 100-ամեակի պատրաստութիւններուն, թէ՛ համահայկական կեդրոնական մարմինն իր անդամակցութեամբ եւ թէ՛ գաղութներու մէջ տեղական մարմիններու աշխատանքներուն սատար կանգնելով:

95-ամեակի տարին է 2013 թուականը: 95-ամեակը առիթ է բոլորիս համար, պարտականութեան հրաւեր մեզմէ իւրաքանչիւրին, Հ.Մ.Ը.Մ.ի ծառայութեան մեր ուխտը վերանորոգելու, որովհետեւ մենք կը հաւատանք որ մրցակցութեամբ լեցուն այս աշխարհին մէջ, միշտ պէտք է պատ-

**Առանց ազգային գիտակցութեան, առանց կարգապահ ու նուիրեալ շարքերու, առանց Ֆիզիքապէս ու հոգեպէս տոկուն երիտասարդութեան կարելի չէ հզօր ու բարգաւաճ Հայաստան ունենալ:**

րաստ ըլլալ Ֆիզիքապէս եւ հոգեպէս, տոկալու եւ պայքարելու:

Բարձրանալու եւ բարձրացնելու: Առանց ազգային գիտակցութեան, առանց կարգապահ ու նուիրեալ շարքերու, առանց Ֆիզիքապէս ու հոգեպէս տոկուն երիտասարդութեան կարելի չէ հզօր ու բարգաւաճ Հայաստան ունենալ: Ու եթէ բախտաւոր օր մը հայութեան պանծալի դրօշը պիտի ծածանի նաեւ բռնագրաւեալ մեր հայրենիքի երկնակամարին վրայ, այդ կը պահանջէ կամք, լաւագոյնին ձգտելու ճիգ եւ յարա-

տեւութիւն:

Այս հաստատ համոզումներով կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակը, խոստանալով միշտ բարձր պահել այն դրօշը, որ մեզի աւանդ ձգուեցաւ միութեան անմասն հիմնադիրներուն կողմէ:

Այն դրօշը, զոր 95 տարի բարձր բռնեցին «հսկայ նուիրման... կամաւոր բանակ»ի հաւատաւոր անդամները:

Այն դրօշը, որ այսօր կը ծածանի Երեւանի ու Արցախի վերեւ, իսկ վաղը, պայծա՛ռ ապագային, պիտի ծածանի նաեւ Վանի, Մուշի, Սասունի, Կարսի եւ Արտահանի վրայ:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը ծնող մեր ժողովուրդը:

Եւ կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեայ երթին մնայուն փարոսը հանդիսացող Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանը:

## Հ.Մ.Ը.Մ. ԾԱՇ ԿՐ ԲԱՇԽԷ ՀԱԼԷՊԻ ՎՏԱՆԳՈՒՄԾ ԹԱՂԵՐՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ



միջական սնունդ ապահովել:

Ի տես այս կացութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի պետական վարչութիւնը օգնութեան ձեռք երկարեց Շէյխ Թահա թաղամասին մէջ գտնուող հայութեան եւ ամէն վտանգ յանձն առնելով, սիրայօժար ստանձնեց ՍՕԽ-ի «Փեթակ» յանձնախումբին պատրաստած օրուան մը ճաշը բաժնել շրջանի հայութեան:

Այս նպատակով, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ Ս. Աստուածածին եկեղեցիէն ուղղութեամբ Շէյխ Թահա եւ տուն առ տուն բաժնեցին օրուան մը ճաշը: Իրերօգնութեան եւ զոհաբերութեան ոգին տիրական եղաւ բոլորին մօտ:

Օրուան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Պալեոզեան բարձր գնահատեց նուիրեալ քոյրերու եւ եղբայրներու աշխատանքը եւ դրուատեց միութենական ծառայութեան անոնց օրինակելի կեցուածքը:

### Րաֆֆի Սիւլահեան ՀԱԼԷՊ

Սուրիոյ տագնապը հետզհետէ բարդանալով վտանգը հասաւ Հալէպի դռներուն: Կրակոցներն ու ռումբերը չխնայեցին Հալէպի հայահոծ թաղերուն, ուր բնակող մեր ժողովուրդի զաւակները ապրեցան դժնդակ օրեր, չկարենալով իրենց բնակարաններէն դուրս ելլել եւ ան-



# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 9-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՊԻՏԻ ՈԳԵԿՈՉԵՆ ԵՐԱԽՏԱՇԽԱՏ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Այս ամրան երեւանի մէջ տեղի ունեցող համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերը պիտի ոգեկոչեն երախտաշատ 14 միութենականներու յիշատակը:

Խաղերու կազմակերպիչ մարմնին որոշումով, մրցանակակիր մարզիկներուն տրուելիք մետալները պիտի կրեն միութեան մէջ իրենց հետքն ու դրոշմը ձգած նուիրեալ եղբայրներու անունները:

Ստորեւ՝ եղբայրներու անունները, կենսագրական ամփոփ ծանօթութիւններով:



### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԻՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով լիբանանահայ գաղութը կերտող եւ մարզական կեանքը ղեկավարող պատմական դէմքերէն մէկն է եղբ. Յովհաննէս Շահինեան: Ան ծնած է 1901-ին, Սեբաստիա: 14 տարեկանին, ազգականներուն հետ կը բռնէ

բռնագաղթի ճամբան, հայրն ու մայրը կորսնցնելով տարագրութեան ընթացքին:

Շրջան մը ան կը մնայ Համա, Նոխուտեան որբանոցը: Ապա, հինգ տարի, Համայէն Այնթուրա, Հալէպ, Քիլիս ու Այնթապ, որբանոցէ որբանոց թափառական կեանք մը ապրելէ ետք, 1920-ին կայք կը հաստատէ Ժիպէյի «Թռչնոց բոյն» որբանոցը:

1924-ին, եղբ. Շահինեան կը յաջողի ընդունուիլ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, իբրեւ ղեղազործութեան ուսանող: Նոյն տարին հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին՝ ֆուտպոլի խումբով մը, որուն առաջին մասնակիցներէն կ'ըլլայ ան: Քանի մը տարի ետք կ'ընտրուի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան անդամ: Յաջորդաբար կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած ողիմպիական խաղերուն, շահելով ախոյեանական տիտղոսներ:

1929-1932 գործով Պաղեստին մեկնելէ ետք, 1932-ին ան վերջնականապէս կը հաստատուի Լիբանան՝ ցմահ Հ.Մ.Ը.Մ.ին ծառայելու պատրաստակամութեամբ: Ան պատնէշի վրայ կը մնայ ամբողջ կէս դար, իբրեւ մարզիկ, մարզական լրագրող, վարչական եւ 1954-1975՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ: Ան բազմիցս կ'ընտրուի լիբանանեան մարզական ֆետերասիոններու անդամ:

Հ.Մ.Ը.Մ.ին եւ ընդհանրապէս մարզական կեանքին իր մատուցած ծառայութիւններուն համար, եղբ. Շահինեան կ'արժանանայ լիբանանեան պետութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն կարգի շքանշաններուն:

Եղբ. Յովհաննէս Շահինեան կը մահանայ 16 Դեկտեմբեր 1979-ին:



### ՎԱՐԴԳԷՍ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Եղբ. Վարդգէս Տէր Կարապետեան ծնած է 1928-ին, Պէյրութ: Պատանի տարիքին ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի պասքեթպոլի խումբին՝ դառնալով անոր լաւագոյն մարզիկներէն մէկը:

Մարզական իր գործունէութեան կողքին, եղբ. Վարդգէս կը մասնակցի Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Ժողովներուն, իբրեւ Լիբանանի ներկայացուցիչ: 1973-ին ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած յատուկ մարմնին: Ապա, 1974-ին, 1979-ին եւ 1983-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ իբրեւ ատենապետ՝ ձեռնհասօրէն կը վարէ միութեան աշխատանքները մինչեւ իր նահատակութիւնը՝ 31 Յունուար 1986:

Յետ-մահու, 14 Նոյեմբեր 2008-ին, ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:



### ՎԱՐԴԳԷՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Եղբ. Վարդգէս Հայրապետեան Հ.Մ.Ը.Մ.ին մաս կը կազմէ 1939-ին, Հալէպ: 1957-ին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին, իսկ 1960-1980, որոշ ընդհատումներով, կը դառնայ մասնաճիւղի վարչական, իսկ այնուհետեւ՝ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եւ ատենապետ:

14 Նոյեմբեր 2008-ին, երկարամեայ իր ծառայութիւններուն համար, ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:



ՍՈՒՐԷՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Եղբ. Սուրէն Մուրատեան կը պատկանի Հ.Մ.Ը.Մ-ի սփիւռքեան առաջին սերունդին: 1934-ին ան Հ.Մ.Ը.Մ-ի ըսկառուտական շարքերուն կ'անդամակցի Նոր Գիւղի մէջ, Հալէպ: 1941-ին կը փոխադրուի Պէյրուս եւ այնուհետեւ երեք տասնամեակ իր լայն մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքի սկառուտական բոլոր աշխատանքներուն, մղիչ ուժը հանդիսանալով անոնց:

Եղբ. Սուրէն երկար տարիներ կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղի վարչական, ապա՝ Շրջանային Սկառուտորհորհուրդի անդամ: 1974-ին ան կը հաստատուի Փարիզ եւ իր շուրջ խումբ մը հաւատաւոր երիտասարդներ հաւաքելով՝ հիմը կը դնէ Հ.Մ.Ը.Մ-ի Փարիզի մասնաճիւղին: Ան կը մահանայ 25 Օգոստոս 1981-ին:



ՏՈՔԹ. ՄԻՍԱԲ ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ

Եղբ. տոքթ. Միսաբ Արզումանեան մէկն է յետ-եղեռնեան սերունդի հաւատաւոր այն դէմքերէն, որուն բովանդակ կեանքը Հ.Մ.Ը.Մ-ի եւ ազգային մեր կառույցներու ճամբով անսակարկ նուիրաբերում եղած է հայակերտման եւ հայապահպանման նուիրական գործին:

Եղբ. տոքթ. Միսաբ Արզումանեան ծնած է 1931-ին, Պէյրուս: 1958-ին, ան կը մեկնի Ամման, ուր մինչեւ 1961 կ'աշխատի իբրեւ բանակի բժիշկ, սպայի աստիճանով: Պէյրուս վերադառնալէ ետք, ան կը բոլորէ ազգային ծառայութեան աւելի քան 35 տարիներ:

Եղբ. տոքթ. Միսաբ Արզումանեան 1962-1964 կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի ատենապետ, 1964-1974՝ Հ.Մ.Ը.Մ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ, 1974-1978 եւ 1980-1982 Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ, իսկ 1987-1999 Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ:

1990-ին, եղբ. Արզումանեան կը գլխավորէ Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ը վերականգնելու առաքելութեամբ Կեդրոնական Վարչութեան հայրենիք առաքած եռանդամ պատուիրակութիւնը:

1965-1999, եղբ. տոքթ. Արզումանեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ-ի Մերձաւոր Արեւելքի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական բոլոր ժողովներուն: 1999-ին ան կը պարգեւատրուի

Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով: Նոյն տարին ան կը հաստատուի Մ. Նահանգներ, ուր կը մահանայ 27 Յունիս 2007-ին:



ԳԷՈՐԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ շրջանի երախտաշատ դէմքերէն մէկն է եղբ. Գէորգ Կարապետեան: Ան ծնած է 1941-ին, Հալէպ: Փոքր տարիքին մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտական շարքերուն եւ կը հասնի մինչեւ Վարիչ Առաջնորդի աստիճանին: Միաժամանակ, ան կը մասնակցի մարզական խաղերու, յատկապէս՝ աթլէթի եւ ֆութպոլի: Կը կրէ սկառուտական պատուոյ առաջին խումբին ու ապա՝ ներկայացուցչական խումբին շապիկները: Մաս կը կազմէ նաեւ Հալէպի ֆութպոլի երիտասարդական կազմին: Կարճ ատեն մը, Դամասկոս գինուորական ծառայութեան շրջանին, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղի ֆութպոլի Ա. խումբին:

Եղբ. Գէորգ Կարապետեան երկար տարիներ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի վարչութեան, ապա՝ Սուրիոյ Շրջանային Վարչութեան: Ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական վեց ժողովներու եւ 1999-ին, Պատգամաւորական 8-րդ ժողովին, կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Եղբ. Գէորգ Կարապետեան կը մահանայ 9 Օգոստոս 2012-ին: Կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:



ՍՈՒՐԷՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Եղբ. Սուրէն Նազարեան ծնած է 1923-ին, Խարբերդ: 1931-ին, ան ծնողքին հետ կը փոխադրուի Հալէպ, ուր փոքր տարիքին կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ-ին:

Եղբ. Սուրէն աւելի քան կէս դարու ազգային-միութենական ծառայութեան վաստակ մը կը ձգէ իր ետին: Իբրեւ անխոնջ նուիրեալ, ան Հ.Մ.Ը.Մ-ին կը ծառայէ, իբրեւ խմբապետ, ընդհանուր խմբապետ, Սկառուտ. Խորհուրդի ներկայացուցիչ, Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ, ատենապետ եւ 1990-1995, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Ան կը հանդիսանայ մտքի անխոնջ աշխատաւոր մը: Յուշագրութիւններով եւ յօդուածներով կ'աշխատակցի հայ մամուլին եւ Հ.Մ.Ը.Մ-ի պաշտօնաթերթ «Մարգիկ»ին:

Իր վաստակաշատ գործունէութեան համար, 27 Նոյեմբեր 1988-ին ան կը պարգեւատրուի Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:






### ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐԴ

Եղբ. Յարուժիկն Գեղարդ, բուն անունով Յարուժիկն Գազանճեան, ծնած է 1928-ին, Գոնիա: Փոքր տարիքին ընտանիքին հետ կը փոխադրուի Հալէպ, ուր կարճ շրջան մը մնալէ ետք՝ 1932-ին

կը հաստատուի Պէյրուսի:

Եղբ. Յարուժիկն Գեղարդ Հ.Մ.Ը.Մ-ին կ'անդամակցի 1936-ին, մաս կազմելով Պէյրուսի մասնաճիւղի գայլիկական շարքերուն: Կ'ըլլայ բազմաշնորհ մարզիկ: Կը կիրարկէ պասքէթ, ֆուտպոլ, գօտեմարտ, փինկ-փոնկ, թենիս, ձողի վրայ մարմնամարզ, հեծիկ եւ լող: Շրջան մը կը վարէ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի ատենապետութիւնը: 1971-1974, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան: Կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Պատգամաւորական 19-րդ եւ 20-րդ ժողովներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի առաջին 6 Պատգամաւորական ժողովներուն: Երեք շրջան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան (1979-1983, 1983-1987, 1991-1995): Կ'արժանանայ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Յարուժիկն Գեղարդ կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ-ի պաշտօնաթերթ «Մարզիկ»ի հիմնադիր սերունդի ներկայացուցիչներէն: Ան կը հեղինակէ բազմաթիւ գիրքեր: Կը մահանայ 14 Մարտ 2006-ին:



### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Վաթսունամեայ միութենական ծառայութեամբ բեռնաւորուած եղբ. Յովհաննէս Տէր Յարուժիկնեան Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան ծանօթ անուն մըն է: Ան ծնած է 1924-ին, Իսկէնտէրուսի Աթըք

գիւղը: Ուսանողութեան տարիները կ'անցընէ Հալէպի մէջ: 1939-ին, Տէր Յարուժիկնեան ընտանիքը կը հաստատուի Պէյրուս, ուր ան չորս տարի կը ծառայէ ֆրանսական բանակին, հասնելով ենթասպայի աստիճանին:

Եղբ. Յովհաննէս Հ.Մ.Ը.Մ-ին կ'անդամակցի 1936-ին, Հալէպի մէջ: Ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի «Շանթ» ֆուտպոլի կրտսերներու խումբին: 1947-1956, ան վարչական զանազան պատասխանատուութիւններ կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղէն ներս: 1957-ին, 1961-ին եւ 1962-ին կը ղեկավարէ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան միջ-վարժարանային մարզահանդէսները: Իր եւ մարզասէր այլ եղբայրներու ջանքերով, 1961-ին կը կազմուի Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի աթլէթի խումբը:

1970-1985, եղբ. Յովհաննէս մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի իրերայաջորդ Շրջանային Վարչութիւններուն: 1986-1995 կը դառնայ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ան-

դամ: 11 Փետրուար 1996-ին, ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին: Կը մահանայ 4 Դեկտեմբեր 2000-ին:



### ԵՐՈՒԱՆԴ ՏԷՄԻՐՃԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ-ական կորովի եւ մտաւորական սերունդի ներկայացուցիչներէն մէկը կը հանդիսանայ եղբ. Երուանդ Տէմիրճեան: Ան ծնած է 1931-ին, Տիգրանակերտ: Տասը տարեկանին, ծնողքին հետ կը փոխադրուի Հալէպ, ուր կանուխէն կը նետուի ազգային կեանքի ասպարէզ, ստանձնելով պատասխանատու պաշտօններ:

Եղբ. Երուանդ փոքր տարիքին կ'անդամագրուի Հ.Մ.Ը.Մ-ին, որ այնուհետեւ կէս դար կը դառնայ իր կեանքի ամէնէն հարազատ միջավայրը: Ան կ'ըլլայ սկաուտ, մարզիկ եւ վարչական: Արգելարչաւի, մէկ քայլ ոստումի եւ հարիւր մեթր վազքի Սուրիոյ ախոյեան:

1963-ին եղբ. Երուանդ կը հաստատուի Լիբանան: Մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղին եւ շրջան մը կը վարէ վարչութեան ատենապետութիւնը: Ան մաս կը կազմէ նաեւ Լիբանանի Շրջանային Վարչութեան, իսկ 1986-1995՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան:

Եղբ. Երուանդ մեծ նուիրումով կը փարի Հ.Մ.Ը.Մ-ի «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրական աշխատանքին եւ շուրջ տասնամեակ մը կը գրէ անոր ոգեշունչ խմբագրականները: Ան Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին կ'արժանանայ 11 Փետրուար 1996-ին: Կը մահանայ 1 Մարտ 1996-ին:



### ԿԱՐՕ ԹԻԻԹԻՒՆՃԵԱՆ

Եղբ. Կարօ Թիւթիկնեան ծնած է 1943-ին, Հալէպ: Ան Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերուն կ'անդամակցի 1956-ին: Պէյրուսի փոխադրուելէ ետք, 1966-1982, մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Լի-

բանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին, իբրեւ քարտուղար, ապա՝ ատենապետ: 1983-ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ այնուհետեւ կը վերընտրուի երեք անգամ, մինչեւ 1999, 16 տարի ձեռնհասօրէն վարելով իր պաշտօնը: 2003-ին, միութեան 8-րդ Պատգամաւորական ժողովին, չորս տարուան շրջանի մը համար ան դարձեալ կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ, սակայն անակնկալ մահը՝ 16 Յունուար 2006-ին, պատճառ կը դառնայ որ ան չկարենայ ամբողջացնել իր պաշտօնավարութեան շրջանը:

Եղբ. Կարօ Թիւթիկնեան 1979-1980 եղած է գլխաւոր

խմբագիրը Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկսուս. Խորհուրդի «Հայ Սկսուս» թերթին: Այնուհետև ան իր ներդրումը ունեցած է միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրական եւ վարչական աշխատանքներուն: Հրատարակած է երկու գիրք. «Հ.Մ.Լ.Մ.ի գաղափարաբանութիւնը» եւ «Հ.Մ.Լ.Մ. եւ ազգային դէմքեր»:

Լիբանանի սկսուսութեան վերելքին իր ունեցած նպաստին համար, 2003-ին ան կը պարգեւատրուի Լիբանանի սկսուսական ֆետերասիոնին կողմէ: Յետ-մահու, ան կ'արժանանայ Հ.Մ.Լ.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:



**ՎԱՐՈՒԺԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ**

Եղբ. Վարուժան Մուրատեան ծնած է 7 Փետրուար 1931-ին, Հալէպ: 1939-ին, Մուրատեան ընտանիքը կը փոխադրուի Պէյրուս, ուր 1943-ին ան մուտք կը գործէ Հ.Մ.Լ.Մ. շարքեր, իբրեւ գայիկ: Այնուհետև, ան կէս դար կը նուիրուի իր պաշտելի միութեան՝ ծառայութեան համեստագոյն աստիճանէն հասնելով բարձրագոյնին՝ Կեդրոնական Վարչութեան անդամակցութեան:

1950-ական թուականներուն, եղբ. Վարուժան կը վարէ Պէյրուսի մասնաճիւղի գայիկական վոհմակները, մատղաջ սերունդի անդամները առաջնորդելով Քրիսեաններու եւ Յակոբեաններու ուղիէն: 1964-ին կ'ընտրուի Պէյրուսի մասնաճիւղի վարչական: Երկու տարի ետք, ան կը հանդիսանայ ԼԵՎԱՄ-ի հիմնադիրներէն: 1971-1978, որոշ ընդմիջումներով, ան կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ: 1979-1987, երկու շրջան ան կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Եղբ. Վարուժան կը հանդիսանայ Հ.Մ.Լ.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի հիմնադիր սերունդի գլխաւոր ներկայացուցիչներէն: 1987-էն մինչեւ իր մահը՝ 7 Մայիս 1993, ան կը վարէ «Մարզիկ»ի վարիչ տնօրէնի պաշտօնը, անսակարկ նուիրումով կատարելով թերթին խմբագրական եւ վարչական աշխատանքները:



նայ Հովիտի «Մասիս» մասնաճիւղի հիմնադիրներէն: 1980-1986, ան մաս կը կազմէ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան, վերջին երկու տարին վարելով անոր ատենապետութիւնը: 1987-էն մինչեւ իր անժամանակ մահը՝ 17 Հոկտեմբեր 1991, ան մաս կազմէ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

1989-ին, Նաւասարդեան 14-րդ մարզախաղերուն, եղբ. Ժիրայր կը հռչակուի տարուան «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ը:



**ՎԱՐԴԱՆ ԲԱԽՇԵԱՆ**

Նորանկախ հայրենիքի Հ.Մ.Լ.Մ.ական առաջին սերունդի հաւատաւոր ներկայացուցիչներէն մէկը կը հանդիսանայ եղբ. Վարդան Բախշեան, Հ.Մ.Լ.Մ.ի Երեւանի մասնաճիւղի առաջին ատենապետը եւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հայրենի առաջին անդամը:

Եղբ. Վարդան Բախշեան ծնած է 1 Յունիս 1965-ին, Արմաւիր: Եղած է Արցախեան ժողովրդային շարժումի ՀՈՒԴ (Հայ Ուանողութեան Դաշինք) միաւորման հիմնադիրներէն: 2 Դեկտեմբեր 1989-ին, Հայաստանի մէջ Հ.Մ.Լ.Մ.ի վերընձիւղումէն ետք, եղբ. Վարդան կ'ըլլայ Հ.Մ.Լ.Մ.ի Երեւանի մասնաճիւղի կազմութեան նախաձեռնողներէն մէկը եւ վարչութեան առաջին ատենապետը: Ապրիլ 1991-ին ան կը մասնակցի Հ.Մ.Լ.Մ.ի 5-րդ Պատգամաւորական Ժողովին եւ կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

16 Դեկտեմբեր 1991-ին, Վարդան Բախշեան կը նահատակուի Արցախի Հասանապատ գիւղի ազատագրման կռիւներուն:

**ԺԻՐԱՅՐ ՊՈՅԱՃԵԱՆ**



Եղբ. Ժիրայր Պոյաճեան ծնած է 22 Հոկտեմբեր 1946-ին, Հալէպ: 1966-ին ան կը փոխադրուի Պէյրուս եւ Պէյրուսի Ամերիկեան Համալսարանէն կը ստանայ փիլիսոփայութեան Մագիստրոսի աստիճան: 1976-ին ան կը հաստատուի Արեւմտեան Մ. Նահանգներ, դառնալով շրջանի հաւատաւոր անդամներէն: 1979-ին եղբ. Ժիրայր կը հանդիսա-

# ՅԱԲԷԼԵԱՆ ՆՈՒՐՈՒՄՈՎ ԵՒ ՅԱՄԱՌ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

«ՄԱՐԶԻԿ»-ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ  
ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱԻԸՆԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Արմեն Քեօշկերեան  
ՀԱԼԷՊ



**Եղբ. Անդրանիկ, հաճեցե՞ք ձեր կենսագրութիւնը ներկայացնել մեզի:**

Ծնած եմ Անտիոք, 1933-ին: 1939-ին ընտանիքիս հետ փոխադրուած եմ Տէր Զօր, ուր նախակրթութիւնս ստացած եմ Ս. Հռիփսիմեան եկեղեցւոյ վարժարանը: Ֆրանսացիներու Սուրիայէն հեռանալէն ետք՝ Աւրնեան ընտանիքը 1946-ին հաստատուեցաւ Հալէպ, ուր ուսումս շարունակեցի Ժեզուիթ կաթողիկէ վարժարանը: Ապա նետուեցայ գործի ասպարէզ:

Սուրիայի շարունակեցի Ժեզուիթ կաթողիկէ վարժարանը: Ապա նետուեցայ գործի ասպարէզ:

**Պիտի ուզէի՞նք համառօտ տեղեկութիւններ ունենալ ձեր Հ.Մ.Ը.Մ.ական կեանքին մասին, առաւել՝ ի՞նչ պաշտօններ ստանձնած էք միութենէն ներս:**

- Տէր Զօրի մէջ Հ.Մ.Ը.Մ.ին անդամագրուած եմ որպէս գայլիկ: Հալէպի մէջ մաս կազմած եմ սկաուտական «Վիշապ» եւ «ձի» խումբերու խմբապետութեան: Հ.Մ.Ը.Մ.ի բուրգը բարձրացած եմ աստիճան-աստիճան՝ ստանալով սկաուտական բոլոր կարգերը եւ աստիճանները: Նշանակուած եմ Սկաուտ. Խորհուրդի անդամ եւ ատենապետ, նաեւ՝ Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ: Հետագային



1959. Չատկուան միջ-մասնաճիւղային խաղերու տողանցք:



1956. Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի երկրորդական խումբերու ախոյեանութեան բաժակը եղբ. Անդրանիկ Աւրնեան կը ստանձնէ տղքոր Ալպեր Գայեանէն:

ընտրուած եմ Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ: Այդ շրջանին իրականացուցած ենք Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի էքիզօլուխի բանակավայրի յարակից մասերու շինարարական աշխատանքը եւ բարեգարգումը:

**Եղբ. Անդրանիկ մասնակցած էք զանազան բանակումներու: Կրնա՞ք յիշել, թէ ո՞ր բանակումը ամէնէն յատկանշականը եղած է ձեզի համար:**

- Մասնակցած եմ միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումներու Զապատանիի մէջ, ուր մեր խումբը գնահատուած է իբրեւ ձեռնային աշխատանքներու գերազանց խումբ, ինչ որ յիշատակելի է ինծի համար: 1959-ին մասնակցած եմ միջ-արաբական սկաուտական ճամպորիին, Եգիպտոս:

**Դուք մարզական կեանք ալ ունեցած էք, որպէս Ֆութպոլիստ, հաճեցե՞ք յիշել ձեր մաս կազմած խումբերը:**

- Ֆութպոլի սէրը մէջս արթնցած է փոքր տարիքէս: Ֆութպոլը մեր ընտանիքի անբաժան մասնիկը եղած է: 1940-1955, Հալէպի մէջ ունէի՞նք 14 երկրորդական խումբեր, որոնցմէ 9 սկաուտական խումբեր էին: Այդ խումբերուն լաւագոյն կազմը պատուոյ առաջին խումբն էր, իսկ ես այդ խումբին խմբապետն էի: Յատկանշական անկիւնադարձ մը արձանագրեց վերոյիշեալ խումբը, երբ իր Ֆութպոլիստներէն 9 մարզիկ փոխանցուեցաւ առաջին խումբ: Փոխանցուող տղոցմէ կարելի է յիշել Անդրանիկ Սիւլիւքճեանը, Գաբօ Գաբրիէլեանը եւ Գէորգ Աւրնեանը:



**Հ.Մ.Ը.Մ. էն բացի ի՞նչ պաշտօններ ստանձնած էք Հալիպի ազգային կեանքէն ներս:**

- Երկար շրջան մը մաս կազմած եմ Ազգ. Սահակեան վարժարանի հոգաբարձութեան: Ներկայիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղական խորհուրդի անդամ եմ:


**Ի՞նչ է ձեր վերջին խօսքը այսօրուան տղոց եւ ի՞նչ ուղղութիւն կու տաք նոր սերունդին:**

- Նախ շնորհակալութիւն ձեր երախտաշատ աշխատանքին



1959. Սկստանալով պատուոյ առաջին խումբ:

համար: Շնորհակալութիւն նաեւ, որ կը յիշէք Հ.Մ.Ը.Մ. ական երէց քոյրերն եւ եղբայրները, առիթը ընծայելով անոնց վեր-յիշելու անցեալի իրենց անմոռանալի յիշատակները: Այսօր, Հ.Մ.Ը.Մ. ի 95-ամեակի տարին, նոր սերունդին թելադրանքս է յաւելեալ նուիրումով եւ յամառ աշխատանքով շարունակել միութենական գործը՝ միշտ կառչած մնալով Հ.Մ.Ը.Մ. ի սկզբունքներուն եւ անոր անգուգական նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-Բարձրացու՛ր» ին:



*Elegance Plus*

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**

# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989)  
ԱՆՏԻՊ, Զ. ՄԱՍ

«**Ա**յսպէս, անոնք ցոյց տուին որ իրենք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադիրներուն մեծ ոգին եւ եղբայրասիրութիւնը իւրացուցած են եւ կը շարունակեն քալել անոնց հարթած ճանապարհէն:

Յաղթողի հպարտանքն ու պարտուողի դառնութիւնը երբեք չփոխուեցաւ կոյր կիրքերու եւ սէրը բացարձակ չպակսեցաւ անոնց մէջ: Խաղավայրին վրայ մրցորդներ են իրարու հետ եւ համակ ջիղ ու կրակ կտրած, կը ջանան գիրար նեղը դնել: Բայց խաղավայրէն դուրս եղբայրներ են, թօթափած իրենցմէ յաղթողի եւ պարտուողի հոգեբանութիւնը...: Ի՛նչ մխիթարական եւ հոգեպարար տեսարան մը կը պարզուէր խաղադաշտին վրայ ախոյեանական մրցումներէ վերջ, երբ Սուրիոյ եւ Լիբանանի անցած տարիներու ախոյեան խումբի տղաքը ուրախութեան ժպիտներով կը համբուրէին այս տարուան ախոյեան խումբի տղաքը, որոնք շնորհիւ իրենց տեւական ճիգին ու մարզանքին մէկ տարուան ընթացքին կրցած էին այդքան կարեւոր նուաճում մը շահիլ:

«Անկարելի է հիացմունքով չմօտենալ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու վարչութեանց գործերուն, որոնք իսկապէս այս տարի արձանագրեցին փառաւոր յաղթանակ մը եւ մեզ բերին

այն համոզման, որ Հ.Մ.Ը.Մ.ի շունչին տակ մարզուած նոր սերունդը արժանի յաջորդը պիտի ըլլայ մեր երէկուան գաղափարական սերունդին: Վկայ Հալէպի մարզադաշտին վրայ տիրող եղբայրական եւ կարգապահ ոգին:

Համոզուած ենք որ պիտի ծաւալի եւ պիտի տիրապետէ Հ.Մ.Ը.Մ.ը մեր գաղութին մէջ:

«Ապրիք տղաք, երբ դուք կաք եւ այսպէս կաք, հայ ժողովուրդը կայ ու կը մնայ» («Ազդակ», 1 Ապրիլ 1932):

Պէջրութի մասնաճիւղը, Հալէպէն դարձին, կը ձեռնարկէ հեծելանիւի մրցումի, Նահրի կամուրջէն Անթիլիաս երթ ուղարձ: Վարչութիւնը իր քանի մը անդամները հակականոնազրային ընթացքի մէջ բռնելէ ետք, 25 Մայիս 1931 թուակիր նամակով կը գրէ Շրջանային Վարչութեան.

«Վերջերս միութեանս մի քանի անդամները սկսած են հակա-Հ.Մ.Ը.Մ.ական մարմիններու մէջ գործօն մասնակցութիւն ցոյց տալ: Վարչութիւնս լրջօրէն հետեւած է անոնց քայլերուն եւ կրցած է քանի մը անգամներ յանցանքի վրայ բռնել զանոնք: Վարչութիւնս քանիցս ազդարարած է որ ետ կենան այդ արարքներէն, իրենք սակայն կոպտօրէն պատասխանած են «մենք ազատ ենք»:

«Այսպիսի սանձարձակ ընթացք մը անպատիժ թողուլը կրնար գէշ վերջաւորութեան մը առաջնորդել միութիւնը: Ուստի, վարչութիւնս Մայիս 17-ի նիստին միաձայնութեամբ որոշեց վտարել զանոնք, այսպէսով, կը կարծենք չարիք մը խափանած ըլլալ...»

«Այսու Ձեզ կը տեղեկացնենք, ուրեմն, որ Յակոբ Աճէմեան, Եփրեմ Էլլէզեան, Շաւարշ Պէքէրեան վտարուած են միութենէս: Մենք



Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի բազմա-վաստակ դէմքերէն եղբ. Լուստեր Մասպանաճեան:



1956. Հ.Մ.Ը.Մ.ի Հատէթի ֆութպոլի խումբը:



14 Ապրիլ 1948. Լիբանանի ֆուտբոլի ամսոյեան եւ բաժակակիր Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի խումբը:

առանց ցաւելու չէ որ տուինք այս որոշումը, բայց հարկ է որ տայինք. կը կարծենք որ դուք եւս ուղիղ պիտի գտնէք տրուած որոշումը»:

Շրջանային Վարչութիւնը անդրադառնալով այս խնդրին, իր 31 Մայիս 1932-ի նիստին կ'որոշէ պատասխանել տեղական վարչութեան, թէ «նամակին մէջ անոնց գործած յանցանքը բացայայտ գրուած չըլլալուն համար, խնդիրը յանձնուած է վարչութեան անդամներէն Ալպէր Յակոբեանին, որպէսզի քննէ եւ վարչութեան բերէ արդիւնքը», իսկ Շաւարշ Պէքէրեան Շրջանային Վարչութեան յղած նամակով մը վերաքննութիւն կը պահանջէր. «որոշուեցաւ գրել իրեն որ այս հարցը քննութեան ենթակայ է արդէն, արդիւնքը կ'իմացուի»:

Պէյրուսի մասնաճիւղը ամիսներէ ի վեր պատրաստութեան մէջ եղող իր տարեկան ողիմպիականը կու տայ: Օրւան թագուհին էր տիկին Հ. Իփէկեան, պատուոյ օրիորդներ՝ Թոփճեան, Սարաֆեան, Մարգարեան, Չէլլէեան: Ընդհանուր իրաւարար Յովհաննէս Շահինեան, դաշտի բժիշկ տոքթ. Պէզճեան եւ շատեր որպէս յանձնախումբերու անդամ նշանակուած էին: Այս դաշտահանդէսին մասին, տեղական վարչութիւնը 26 Մայիս թուակիր նամակով կը գրէ Շրջանային Վարչութեան.

«...Մենք տուինք մեր տարեկան մարզահանդէսը խիստ մեծ յաջողութեամբ, մարզական բաժինը աննախընթաց կարելի է համարել, թէեւ նիւթապէս մեր սպասածը չկրցինք ձեռք բերել»: Այս մարզահանդէսին առիթով «Ազդակ»-ի 26 Մայիս 1932-ի համարին մէջ կը կարդանք. «Ներկայ գտնուեցանք, ինչպէս միշտ, այս անգամ ալ Հ.Մ.Ը.Մ.ի մարզահանդէսին...: Հիացմունքով դիտեցինք մեր մարզիկներուն առոյգ դնդերներն ու ճարպիկ շարժումները»:

«...Շիտակն ըսելով, Կիրակի օրուան այդքան զոհաբերութիւնով եւ տքնաջան աշխատանքով կազմակերպուած հանդէսը իր շուրջ չունեցաւ պէյրուսի վարչութիւնը, որ կը համ-

րըւի 30,000 հոգի... Կեդրոն քաղաք, լոյս քաղաք, Սուրիոյ եւ Լիբանանի միակ վայրը, ուր կեանքը, կը կարծենք, համեմատաբար աւելի տանելի է տնտեսական տեսակէտով... Որքան հաճոյքով եւ հրճուանքով, եթէ կ'ուզէք նախանձով կարդացի, Հալէպի Ջատկուան միջ-մասնաճիւղային մրցումներուն նկարագրութիւնը: Կ'ըսեն թէ 4000-5000 հանդիսականներ ներկայ եղած են: Ես ի գուր ուզեցի հոս գտնել այդ թիւին մէկ տասներորդը...»

«...Կը բաղձայինք հարիւրաւոր երիտասարդ մարզիկներու շարանը եւ սկսուտներու ստուար խումբերը ծափահարել տողանցքի պահուն... Հ.Մ.Ը.Մ.ի դերը պէտք չէ սահմանափակուի ֆութպոլով»:

«Ժամանակն է որ լծուին ֆիզիքական ընդհանուր դաստիարակութեան, որ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրին...: Աւելին: Պէտք է ըմբռնեն վերջապէս, որ Պէյրուսի քաղաքին մէջ չէ միայն հայութիւնը: Նոր կազմուած գանազան թաղամասերը, իրենց զուտ հայկական բնակիչներով, կը ներկայացնեն պէյրուսահայութեան երեք չորրորդը: Իրաւունք չունինք անտեսել այն հսկայ զանգուածը, որ թէեւ իր մէջ չի հաշուեր մտաւորականներ, բայց է մեր ժողովուրդին լաւագոյն կորիզը, աւլցուն զոհաբերութեան եւ հայրենասիրութեան ոգիով... Պէտք չէ աշխատիլ դառնալու քաղաքի միութիւն, այլեւ գիւղի կամ աւանի, հեռաւոր թաղամասերու...» (Գ. Գանարեան, «Ազդակ», 26 Մայիս, 1932):

Առաջին համաշխարհային պատերազմէն բաւական վերջ, 1923-1926, Յունաստանէն ու Սուրիա-Լիբանանէն որբերու տեղափոխութիւնն ու տեղաւորումը Ֆրանսայի ազարակները, ծնունդ տուաւ Չափահաս Որբերու Միութեան՝ նպատակ ունենալով պայքարիլ ապագայնացման դէմ, - սնուցել սէր հայրենիքին հանդէպ, ճանչնալ ցեղային պատմութիւնը եւ պահել տոհմային ավանդույթները («Երկունք», Ա. տարի թիւ 4): Այս միութիւնը Ֆրանսայէն դուրս իր արձագանգը գտաւ գլխաւորաբար Սուրիոյ եւ Լիբանանի որբանոցներէն



1928-1929. Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ֆուտբոլի խումբը:

արձակուող, այս երկիրներուն մէջ հետըհետէ հաստատուող որբերու շարքերուն մէջ: Այս շրջանին մէջ, միութիւնը պահելով հանդերձ իր ինքնուրոյն դիմագիծը, միշտ գործակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հետ: Իր կազմակերպած Ապրիլեան սգահանդէսներուն Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներ ու վարիչներ իրենց անվերապահ մասնակցութիւնը բերած են



1947 Յ.Մ.Ը.Մ.ի Հալէպի սկաուտական պատուոյ առաջին խումբը:

տարիներու ընթացքին, իսկ իր Ֆուլթայոյի խումբերը միշտ ալ բարեկամական հանդիպումներ ունեցած են, օր մըն ալ գալու եւ ձուլուելու Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներուն մէջ: 1932-ին, Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային հանդիպումներէն ետք, Չ.Ո.Միութեան Պէյրութի մասնաճիւղի վարչութիւնը կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի վարչութեան՝ Ֆուլթայոյի հանդիպում մը կազմակերպելու գոյգ միութիւններու առաջին խումբերուն միջեւ: Հալէպը առաջարկը կ'ընդունի: Մրցումին բաժակը

կը տրամադրէ «Պանդոկ «Պարոն»ի տէր Արմէն Մազլումեան: Խաղը կ'անցնի հետաքրքրական: Հալէպ կը յաղթէ: Խաղէն ետք «Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ը ի պատիւ Վահագնի Չ.Ո.Միութեան Ախումբին կու տայ թէյ-յասեղան մը, ուր կը հրաւիրուին նաեւ քաղաքիս ծանօթ խումբեր՝ Վասպուրական ու Նուպարեան:

«Պրն. Արմէն Մազլումեան, իր կարգին,

կը հրաւիրէ Վահագն ու Հ.Մ.Ը.Մ.ի խումբերը «Պանդոկ Պարոն»ի ճաշկերոյթին, որուն ընթացքին Պարոն խօսք առնելով ի միջի այլոց կը նշէ.- Իմ փափաքս է որ դուք ձեր մէջ զարգացնէք ներողամտութեան, փոխադարձ վստահութեան եւ եղբայրասիրութեան ոգին: Այս ձեւով մեծապէս ծառայած կ'ըլլաք նաեւ ձեր ազգին» («Ազդակ», 9 Ապրիլ 1932):

(Շար. 6)


# ARMENIA

for private and group trips


www.saberatours.fr

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days


## Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY **Armavia**  
Արմավիա




11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com




48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# ՊԱՅԵՐՆԻ ՓԱՌՄԵՈՐ ՎԵՐԱԴՄԱՐՁԸ

սելիորէն տիտղոսը խլեց Միլնիի կազմէն: Այլ խօսքով, վերջին չորս տարիներուն երեք անգամ աւարտականի հասնելով, անոնք այս տարի արժանաբար տիրացան բաժակին: Ճիշդ է, որ աւարտական մրցումի առաջին կիսախաղին Տորթմունտի կազմը աւելի տպաւորեց ու կրնար կոլեր նշանակել, սակայն երկրորդ խաղակէսին միլնիիսցիք «արթնցան» ու հասկցան որ այս տարի ալ կրնան պարտուիլ ու իրենց համակիրները այլեւս կրնան չներել իրենց:

Պայէրն Միլնիի Գերմանիոյ ամէնէն ժողովրդական ու սիրուած ակումբն է: Ան կը պատկանի Գերմանիոյ եւ Եւրոպայի ամէնէն շատ տիտղոսներու տիրացած ակումբներու փաղանգին: Գերմանիոյ ֆուլթպոլի «հսկաներ»էն շատերը անցած են անոր բովէն: Անոր վերելքը կը սկսի 1960-ական թուականներուն. Պեքընպաուլըր, Կերտ Միլլըր, Մայրը, Պրայթնըր: Աւելի ուշ, Ռումենիկէ, Աուկընթալըր, Էֆընպըրկ, Մաթէոս, Էլպըր, Քան եւ այլն կերտած են անոր փառաւոր անցեալը:

Պայէրն Միլնիի այս յաջողութեան մէջ բնականաբար մեծ դեր ունեցաւ անոր փորձառու եւ հմուտ մարզիչը՝ Եուփ Հայնքէսը: Տարբեր ժամանակներու տարբեր ակումբներ մարզած եւ յաջողութիւններու հասած այս մարզիչը երեք անգամ տիրացած է Գերմանիոյ բաժակին եւ հինգ անգամ ալ Գերմանիոյ Սուփըր Քափին: Պայէրնի եւ շուրջ տասը գերմանական եւ սպանական խումբեր մարզած Հայնքէսի գլխաւոր նուաճումը եղած է Ռէալ Մատրիտի հետ «Չեմփիընզ Լիկ»ի տիտղոսը 1998-ին: Այս երկրորդ տիտղոսով ան միացաւ մարզիչներու այն փաղանգին, որոնք երկու տարբեր ակումբներու հետ յաջողած են տիրանալ «Չեմփիընզ Լիկ»ի բաժակին:

Պայէրն Միլնիի Եւրոպական մրցաշարքերու ընթացքին կատարած է 387 մրցում. յաղթած է 213 մրցում, հաւասարած՝ 89, իսկ պարտուած՝ 85 մրցում: Ան հինգ անգամ (1974, 1975, 1976, 2001, 2013) շահած է «Չեմփիընզ Լիկ»ի, մէկ անգամ (1967) Եւրոպայի Բաժակակիրներու Բաժակը եւ մէկ անգամ ալ՝ 1996-ին ԵՈՒ. Էֆ. Ա.ի («ԵՈՒՐՕ Լիկ») բաժակը:

## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**Ա**նկասկած, 25 Մայիս 2013-ը անմոռանալի թուական մը պիտի մնայ Պայէրն Միլնիի յաջողութիւններու պատմութեան մէջ: «Չեմփիընզ Լիկ»ի աւարտականի սուլիչէն երկու վայրկեան առաջ, հոլանտացի Արիէն Ռոպէնի կողմէ Միլնիի կը նուիրէր հինգերորդ տիտղոս մը, որուն երկար տարիներէ ի վեր անհամբեր կը սպասէին գերմանացի համակիրները:

Պայէրնի համակիրներուն եւ պատասխանատուներուն համար այս տիտղոսը եթէ սպասելի էր, ապա ֆուլթպոլի մասնագէտներուն կողմէ ան կը նկատուի Պայէրն Միլնիի արդար նուաճումը: Արդարեւ, վերջին տարիներուն Գերմանիոյ ֆուլթպոլի «հսկան» ինքզինք վերագտած է ո՛չ միայն երկրի ախոյեանութեան ծիրէն ներս, այլեւ՝ Եւրոպայի մէջ ան ինքզինք կը պարտադրէ: Անցեալ տարեշրջանի «Չեմփիընզ Լիկ»ի աւարտականին անոնք փենալթիներով զիջեցան Չելսիի, երբ այնքան մօտ էին բաժակին: 2010-ին, Միլանի Ինթէրը անսպա-





Պայերն Միլնիթս ունի բազմաթիվ հաջողություններ և հաճախակի հաղթանակներ է գրանցում մրցանակային մրցումներում: Այս 23 անգամ (մրցանակ) տիրացած է Գերմանիայի ախոյեանութեան, 15 անգամ (մրցանակ) տիրացած է Գերմանիայի բաժակին եւ հինգ անգամ ալ Սուպեր Գափին:

Միլնիթսի վերջին տարիներու յաջողութիւններուն մէջ, անկասկած, իր դերակատարութիւնը ունի Ֆուլթայոլիստներու այն փառանքը, որ նուաճեց «Չեմփիընզ Լիկ»ը: Բերդապահ Նոէրը, յետսպահներ Լահմ, Պոթանկ եւ Վան Պոյթըն, միջնապահ ու յառաջապահ գիծի վրայ միշտ գործունեայ Ռիպերի, Ռոպէն, Թոմաս Միլլըր եւ Պասթիան Շվայնշթայկըր հասած են Ֆուլթայոլիստի ասպարէզի իրենց գագաթնակէտին եւ իրենց հաւաքական գեղեցիկ խաղով ու կամքով յաջողած են բաժակը բերել «տուն», որմէ կը բացակայէր աւելի քան տասը տարիէ ի վեր:

Հակառակ այս իրագործումին, մարզիչ Հայնքէս մեկնեցաւ Յունիսին: Անոր աշխատանքը պիտի շարունակէ նոյնքան «վարպետ» մարզիչ Կոլարտիոլան: Անոր ուսերուն դրուած է ծանր պարտականութիւն մը. պահել նուաճուած



տիտղոսները, թէ՛ «Չեմփիընզ Լիկ»ը եւ թէ՛ Գերմանիայի ախոյեանութիւնը: Կոլարտիոլա «Պարսա»յի հետ նուաճեց հնարաւոր բոլոր տիտղոսները: Այսօր ան իր տրամադրութեան տակ ունի նոյնքան հզօր խումբ մը, որքան «Պարսա»ն էր տարիներ առաջ: Պիտի յաջողի՞ նոյն յաջողութիւնները իրագործել: Գերմանացի համակիրները կը հաւատան ու վստահ են, որ սպանացին ճիգ պիտի չխնայէ, որ Միլնիթս «Պարսա»յի նման դառնայ ո՛չ միայն Եւրոպայի, այլեւ՝ աշխարհի ամէնէն հզօր ու անգսպելի կազմը:

with the complements of

Restaurant Al-Mayass



Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքին համար սովորութիւն դարձած է Հայաստանի անկախութեան տօնը նշել Մայիսեան հանդիսաւոր փառատօնով: Այս տարի, սակայն, փառատօնը ունէր յաւելեալ խորհուրդ եւ պատգամ, որովհետեւ ան կը նշէր երկու կարեւոր տարեդարձներ՝ Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակները:

Այսպէս, Կիրակի, 26 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքը իր ըսկառտներով, մարզիկներով, ԼԵՎԱՄ-ի մարզախաղերուն մասնակցած աշակերտներով, միութենականներով եւ համակիրներու խիտ շարքերով համախմբուեցաւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտ՝ վճռակամ ու բարձրադաղակ յայտարարելու, որ պիտի ընթանայ Հայաստանի անկախութիւնը կերտած հերոսներուն նուիրական ուղիով, պիտի շարունակէ Հ.Մ.Ը.Մ-ի սրբազան առաքելութիւնը՝ ըսփիւռքի թէ Հայաստանի մէջ՝ պատրաստելով հայրենիքն ու հայրենիքին հա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ-Ի ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ

մար ամէն ինչ նուիրաբերելու պատրաստ, ազգասէր, հայրենատենչ եւ անկախութեան արժէքին գիտակից «Կամաւոր բանակ»:

Մայիսեան փառատօնը վայելց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հովանաւորութիւնը եւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի նախագահութիւնը:

Երեկոյեան ժամը 5.30-ին, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին կողմէ կատարուած Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն կղզոյթով բարձրացան Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները:

Փառատօնին բացման խօսք արտասանեց Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենադպիր եղբ. Հայկ Թապազեան: Ներկաները ողջունելէ ետք, եղբայրը անդրադարձաւ 95-ամեայ Հ.Մ.Ը.Մ-ին ունեցած դերակատարութեան՝

հայ սկաւտութեան եւ մարմնակրթութեան զարգացման, բայց մանաւանդ՝

սերունդներու ազգապահպանման ու հայապահպանման մէջ:

Եղբայր Թապազեան Մայիսեան փառատօնին նման ժողովրդային հաւաքները լաւագոյն առիթները նկատեց վերանորոգելու մեր ուխտը՝ տէր կանգնելու միութեան նշանաբանին, գործելու ի շահ ազգին ու հայրենիքին, որպէսզի անաղարտ մնայ հայրենիքն ազգային դիմագիծը, միութենական ոգին եւ հաւաքական կամքը: «Հ.Մ.Ը.Մ-ը աննահանջ ու հաստատ քայլերով պիտի շարունակէ իր առաքելութիւնը, շնորհիւ հայ ժողովուրդի գիտակցութեան եւ անոր մշտաթարմ կորովին ու հաւատքին», հաստատեց ան:

Այս առիթով, եղբայրը շնորհակալութիւն յայտնեց միութեան հաւատացող, անոր աշխատանքներուն սատար հանդիսացող, փառատօնին յաջողութեան նպաստած բոլոր անձերուն, նաեւ՝ ԼԵՎԱՄ-ի հովանաւորութիւնը ստանձնած Հայկազեան համալսարանին եւ ԼԵՎԱՄ-ի մասնակից վարժարաններու տնօրէնութիւններուն, մարզական պատասխանատուներուն եւ աշակերտութեան:

Բացման խօսքէն ետք Սերոբ Յակոբեան երգեց Հ.Մ.Ը.Մ-ի նուիրուած երգը:

Ապա, գայլիկ-արծուիկ ճիւղերը ներկայացուցին «Օձի պար»ը, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակին նուիրուած սկաւտական պատկեր մը պարզուեցաւ դաշտին վրայ: Ըսկառտները ներկայացուցին իրենց





կաններ՝ հաւատարիմ մնալով «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին, վկայուեցան մարմնակրթական այս կառույցն ու ջանք փոխանցեցին սերունդէ սերունդ: Երէկուան մարզիկներն ու սկաուտները դարձան պատասխանատուներ ու Հ.Մ.Ը.Մ-էն ստացած իրենց դաստիարակութիւնը ծառայեցուցին նոր սերունդներ պատրաստելու աշխատանքին», նշեց եղբ. Քէշիշեան:

Շարունակելով, եղբայրը ոգեկոչեց յիշատակը Հ.Մ.Ը.Մ-ը հիմնած հիմնադիրներուն, Հ.Մ.Ը.Մ-ին ծառայած ու անկէ անցած ծանօթ թէ անծանօթ, վաստակաշատ թէ խոնարհ հերոսներուն, որոնք անսակարկ զոհաբերութիւններ յանձն առին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ը գոյատեւէ ու բարգաւաճի:

Եղբայրը հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը

րոկ մարզական միութիւն մը չէ: «Հ.Մ.Ը.Մ-ը սփիւռքահայութեան մարմնակրթական նախարարութիւնն է, որ հայ պատանին ու երիտասարդը մարզական ոգիով կը զինէ՝ ըլլալու համար արի ու չարքաշ տիպար քաղաքացի: Ան սկաուտին կը սորվեցնէ «գործել բարիք մը ամէն օր»: Հ.Մ.Ը.Մ-ը այն կառույցն է, որ կը հնչեցնէ «հսկայ նուիրման տորմիղ հրաթեւ կամաւոր բանակ» քայլերգը», եզրափակեց ան:

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ 95 տարի շարունակ հայ իրականութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ունեցած ազգային դերակատարութեան: «Մեզի նման փոքր ու աշխարհի տարածքին սփռուած ժողովուրդի մը մէջ, հրաշքի համազօր բան է 95 տարի մարզական եւ սկաուտական միութիւն մը պահելը եւ թիւով ու որա-

դի մը մէջ, հրաշքի համազօր բան է 95 տարի մարզական եւ սկաուտական միութիւն մը պահելը եւ թիւով ու որա-

առօրեային ու աշխատանքներէն առնըւած պատկերներ, մինչ այդ ընթերցուեցան 95-ամեայ միութեան յատկանշական թուականներուն եւ դէպքերուն մասին տեղեկութիւններ:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան յայտնեց, որ ազգային սկզբունքներու վրայ հիմնուած որեւէ կազմակերպութիւն որ կը գոյատեւէ եւ իր հիմնադրութեան տարեդարձները կ'ունենայ, անպայման կ'ունենայ հաւաքական աշխատանքին եւ կազմակերպութեան գերազօր նպատակին հաւատացող անդամներ, որոնց զոհաբերութեան եւ կամաւոր աշխատանքին շնորհիւ կը գոյատեւէ եւ կ'ուճանայ ան:

«Ահա այդ զոհաբերութեան «կամաւոր բանակ»ին ծննդավայրն է Հ.Մ.Ը.Մ-ը, որ 1918-էն ի վեր եղաւ գեղեցկագոյն մանկապարտէզ ու լաւագոյն համալսարան: Հազարաւոր Հ.Մ.Ը.Մ-ա-

Լ-Մ-ը, որ 1918-էն ի վեր եղաւ գեղեցկագոյն մանկապարտէզ ու լաւագոյն համալսարան: Հազարաւոր Հ.Մ.Ը.Մ-ա-



կով տեւաբար յառաջդիմելը: Իսկ այդ հրաշքը մենք կը պարտինք մեր սքանչելի ժողովուրդին, որուն համար Հ.Մ.Ը.Մ-ը եղած է ու կը մնայ սերունդներու փրկութեան լաստը, մարզական առողջ միջավայրը, սկաուտական ազնիւ ընկզբունքներու դարբնոցը, մէկ խօսքով՝ մարզակերտումի եզակի կեդրոնը», ըսաւ ան:

Միութեան 95-ամեակին անդրադառնալով, եղբ. Մկրտիչեան ըսաւ, որ 95-ամեակի ուրախութեան մէջ մտահոգութիւն եւ թախիծ կայ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը մտահոգութեամբ կը հետեւի իր պատմական ու ճառագայթող շրջաններէն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ շրջանին ապրած դժնդակ պայմաններուն: Մտահոգութիւն մը, որ արդարօրէն ծնունդ տուած է զօրակցութեան ու անվերապահ աջակցութեան:



Ան յոյս յայտնեց, որ շուտով խաղաղութիւնն ու անդորրութիւնը տիրեն եւ շրջանը վերագտնէ իր երբեմնի փայլուն օրերը:

Վերջապէս, եղբ. Մկրտիչեան դիտել տուաւ, որ 95-ամեակը առիթ է Հ.Մ.Ը.Մ-ի ծառայութեան մեր ուխտը վերանորոգելու, «որովհետեւ մենք կը հաւատանք, որ մրցակցութեամբ լեցուն այս աշխարհին մէջ, միշտ պէտք է պատրաստ ըլլալ ֆիզիքապէս եւ հոգեպէս, տոկալու եւ պայքարելու: Բարձրանալու եւ բարձրացնելու (խօսքին անրողջութիւնը տեսնել էջ 3-4):

Եղբօր խօսքէն ետք, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէչիշեանի ձեռամբ տեղի ունեցաւ ԼԵՎԱՄ-ի վահաններու տուչութիւն. նախակրթարանի բաժինի վահանին արժանացաւ Ազգ. Բառասնից Մանկանց

վարժարանը, միջնակարգի վահանը ստացաւ Վահան Թէքէեան վարժարանը, իսկ երկրորդական վահանին տիրա-



ցաւ Համազգայինի Մելանթին եւ Հայկ Արսլանեան ճեմարանը:


Ապա խօսք առաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան: Ան ողջունեց անկախութեան 95-ամեակը եւ յայտնեց, որ 28 Մայիս 1918-ին փայլատակեց հայու ազատատենչ ոգին, որ միշտ փայլատակած է, երբ հայրենիքը գտնուած է տարբեր մարտահրաշխանքներու դէմ յանդիման, երբ ճգնաժամային պահեր եւ կացութիւններ հայրենիքը դրած են տարբեր պայմաններու դէմ յանդիման:

Առաջնորդը շեշտեց, որ սերունդէ սերունդ փոխանցուած այդ ոգին է, որ պահած ու պահպանած է հայ ժողովուրդը, երբ ճակատագրական կացութիւններու մէջ գտնուած է ան:

Այս ոգիին մասին խօսելով, Գեղամ

Արք. ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ը, որ միշտ պատրաստ՝ ուխտապահի ջանքերով եւ կամաւոր բանակով 95 տարի շարունակ իրերայաջորդ սերունդներու մէջ վառ պահեց ազատատենչ ու ազգապահպան այդ ոգին:

Հայրենիքն էլ յատկապէս միջին արեւելեան անոր հատուածին սպառնացող մարտահրաշխանքներուն եւ դժուարութիւններուն մասին խօսելով, Առաջնորդը դիտել տուաւ, որ այսօր քաղաքական եւ ազգայնական մագլցումներն ու վտանգաւոր զարգացումները ծանրացած են պատմական եւ պատուական գաղութ հանդիսացող սուրիահայրենիքի վրայ: Ան նշեց, որ Սուրիոյ իրադարձութիւններուն պատճառով սուրիահայրենիքը տազնապահար օրեր կ'ապրի եւ դժուարութիւններու



Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս  
www.PhotoRAFFI.me

դէմ յանդիման կը գտնուի՝ համայն հայրենիքը դնելով իրեն նեցուկ ու գործիք կանգնելու յանձնառութեան տակ:

Առաջնորդը հաստատեց, որ այս յանձնառութեան մէջ լիբանանահայրենիքը միշտ պատրաստ եղած է եւ ըստ այնմ կը գործէ: «Ազգապահպանումը լիբանանահայրենիքեան միջնաբերդն է, իսկ այդ միջնաբերդին միջնաբերդը Պուրճ Համուտն է», շեշտեց ան՝ աւելցնելով, որ սերունդներու դաստիարակութիւն կը նշանակէ հայ դպրոց: Այս առիթով, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդը յայտարարեց, որ Ազգային կեդրոնական երկրորդական նոր վարժարանը արդէն պատրաստ է իրբեւ ծրագիր, ոգեղէն շէնք եւ սերունդներու թրժման կոչուած յանձնառու կառոյց: Յառաջիկայ տարի կառոյցը տեսանելի պիտի ըլլայ մեր աչքերով:

Իր խօսքը եզրափակելով, Գեղամ Արք. Խաչերեան ողջունեց յիշատակը Մայիս 28-ը կերտած հերոսներուն,



# ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ՝ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

## Թղթակից ԱՅՆՃԱՐ

**Ե**րեքշաբթի, 28 Մայիս 2013-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի մասնաճիւղին կազմակերպութեամբ, գիւղին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային փառատոն՝ Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-րդ տարեդարձին առիթով:

Փառատոնը սկսաւ Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի ֆուտպոլի դաշտէն, ուրկէ ընթացք առաւ սկաուտական տողանցքը՝ առաջնորդութեամբ մասնաճիւղի շեփորախումբին: Հ.Մ.Ը.Մ-ական տողանցողները Այնճարի մայր փողոցներէն տողանցելով հասան Հ.Մ.Ը.Մ-ի ակումբ: Տողանցքին մասնակցեցան մասնաճիւղին սկաուտ-արենոյշները, գայլիկ-մըջնիկները եւ մոկլիները:

Հ.Մ.Ը.Մ-ի ակումբի պասքեթպոլի դաշտին վրայ տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան 95-ամեակի սոնակատարութիւնը՝ մասնակցութեամբ մեծաթիւ հայորդիներու: Զեռնարկին բացման խօսքը արտասանեց եղբ. Սեպուհ Պոյաճեան: Ան շնորհաւորեց հայ



ժողովուրդը Մայիսեան փառաւոր յաղթանակին առիթով՝ եւ կոչ ուղղեց բոլորին վառ պահելու անկախութեան կերտիչներուն կտակը՝ տէր կանգնելով ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի գաղափարին:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 95-ամեակի կարեւորութեան: Ան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին 95-ամեայ երթը եւ բարձր գնահատեց այն բոլոր



սերունդները, որոնք ծառայեցին համահայկական այս միութեան: Եղբ. Քէշիշեան յատուկ կերպով շեշտեց Հ.Մ.Ը.Մ-ի մարդկային եւ ազգային դաստիարակութեան առաքելութիւնը՝ կոչ ուղղելով տէր կանգնելու «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին:

Եղբ. Քէշիշեանի խօսքէն ետք տեղի ունեցաւ միջ-դպրոցական մարզական մրցումներու յաղթողներու մետալներու բաշխումը՝ ձեռամբ Այնճարի քաղաքապետին, երեք վարժարաններու տնօրէններուն, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան ներկայացուցիչներուն եւ Հ.Յ.Դ. դաստիարակչական յանձնախումբի ներկայացուցիչին: Յաղթող մարզիկները ստացան մետալներ, իսկ խումբերը՝ բաժակներ:

Զեռնարկին վերջին բաժինով ելոյթ ունեցան երգիչներ Շաքէ Պաղտասարեան եւ Սարգիս Թաշճեան՝ ընկերակցութեամբ Սեդօ Պաղտասարեանի: Անոնք կատարեցին ազգային-հայրենասիրական երգեր՝ ստեղծելով խանդավառ մթնոլորտ:

Յայտնենք, որ ձեռնարկին ընթացքին տեղի ունեցաւ մասնաճիւղին կազմակերպած վիճակահանութեան վիճակաձգութիւնը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՏՂՈՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ Ա. ԴԱՍԱԿԱՐԳ

**Ե**րկար սպասումէ ետք, 13 Մայիս 2013-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիքանանի պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբը Ա. դասակարգ բարձրացաւ, Թատամոն Զուքի դէմ աւարտական հանգրուանի իր երեք ճակատումները յաղթանակով աւարտելէ ետք:

Արդարեւ, Թատամոն Զուքի դէմ առաջին երկու մրցումները յաղթելէ ետք, վճռական երրորդ ճակատումին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Ատոմ եւ Սեյրա Թնճուկեան» մարզադաշտը մրցումի ազդանշանէն ժամեր առաջ լեցուեցաւ ամբողջութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի համակիրներուն համար սկսաւ նեղ գալ:

Առաջին երկու մրցումներուն նման, այս մրցումին եւս Հ.Մ.Ը.Մ.Ի մարզիկները պայքարեցան դաշտին վրայ, իսկ համակիրները իրենց կարեւոր դերը ունեցան թրիպիւնին վրայ՝



Իրենց կողքին ունենալով Հ.Մ.Ը.Մ.Ի շեփորախումբը:

Առաջին երկու մրցումները 65-52 եւ 52-47 արդիւնքով յաղթելէ ետք, երրորդ մրցումին յաղթանակը արձանագրուեցաւ 58-51 արդիւնքով (8-17, 17-9, 14-7 եւ 19-18) եւ Հ.Մ.Ը.Մ. Ա. դասակարգ վերադարձաւ, 8 տարուան բացակայութենէ ետք:

Մրցումին աւարտին, մրցանակաբաշխութեան ներկայ եղան Լիքանանի պասքեթպոլի ֆետերասիոնի նախագահ Ռոպէր Ապու Ապտալլա, Ասիոյ պասքեթպոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար եղբ. Յակոբ Խաչերեան, ֆետերասիոնի անդամներ եղբ. Էլի Սրապոնեան եւ Վիգէն Զերչեան:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԷՅՐՈՒԹԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ ԿԸ ՊԱՀԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԽՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԸ

**1** Մայիսին, Մոն լա Սալ վարժարանի մարզադաշտին վրայ աւարտեցաւ Լիբանանի փինկ-փոնկի աղջկանց Ա. դասակարգի խմբային ախոյեանութիւնը, որ իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ. Պէյրուլթի եւ Ատապ Ուալ Ռիատա Քֆարչիմայի խումբերը:

Հ.Մ.Ը.Մ. Պէյրուլթ տիտղոսը պահեց իր մօտ՝ արձանագրելով 3-0 արդիւնքով տպաւորիչ յաղթանակ մը:

Հ.Մ.Ը.Մ. Պէյրուլթ, որ 2000-էն ի վեր տիտղոսին տիրացած է 13 անգամ, 2011-ին միայն չկարողացաւ ախոյեան հանդիսանալ, երբ պարտուեցաւ ժամհուրէն:



Հ.Մ.Ը.Մ. Պէյրուլթի մաս կը կազմեն քոյրեր Դուլին Մունջօղլեան (Լիբանանի 2013-ի ախոյեան), Նոէլ Քէչիչեան (2012-ի ախոյեան), Լարա Քէչէպաչեան (2011-ի ախոյեան) եւ Նենսի Մունջօղլեան: Խումբին մարզիչն է Լիբանանի փինկ-փոնկի Ֆետերասիոնի փոխ նախագահ եղբ. Րաֆֆի Մունջօղլեան:

Մրցումին աւարտին, ախոյեան խումբին մրցանակաբաշխութիւնը կատարեց Լիբանանի փինկ-փոնկի Ֆետերասիոնի նախագահ եւ Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի անդամ Սելիմ Հափ Նիքոլա, ներկայութեամբ Ֆետերասիոնի անդամներուն:

## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՅԱՐԳԱՆՔ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷԿՈՒԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

### Թղթակից ՊԷՅՐՈՒԹ

**Հ**այկական Յեղասպանութեան 98-ամեակին առիթով, ինչպէս ամէն տարուան 23 Ապրիլին, այս տարի եւս, Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի աստիճանաւոր սկաուտները եւ ֆուլթայոլի դպրոցի աշակերտները այցելեցին Պիքֆայա եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակ-

ներու յիշատակին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ Շրջանային խմբապետական կազմի անդամներու:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ եղբ. Հայկ Թապագեան: Ան անդրադարձաւ 98 տարիներ առաջ թուրքին գործած Յեղասպանութեան, որուն իբրեւ հետեւանք՝ հայութիւնը դարձաւ տարազիր եւ տարածուեցաւ ամբողջ աշխարհի մէջ: Ան նշեց, որ այսօր հայը ամէն տեղ է, բացի իր պապենական եւ հարազատ հողերէն, զորս բռնազրաւած թուրքը կը շարունակէ ուրանալ իր ոճիրը: «Բայց եւ այնպէս, այնքան ատեն որ գոյութիւն ունին պահանջատէր հայու զաւակներ, որոնք գիտակից են իրենց իրաւունքին, ընկրկում չեն ճանչնար իրենց պայքարին մէջ, մեր Դատը պիտի մնայ կենդանի, մեր պահանջատիրական երթը անպայման պիտի հասնի արդար հատուցման», շեշտեց եղբ. Թապագեան:

Եղբոր խօսքէն ետք տեղի ունեցաւ Յեղասպանութեան նահատակաց յուշարձանին առջեւ ծաղկեպսակներու զետեղում:



Photo Alex



Ներկայ մը ԱԹՆՔ

Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի ֆուտպոլի խումբին եւ յունահայ Հ.Մ.Ը.Մ-ականներուն ու մարզասէրներուն համար Ապրիլ 28-ը տօնական օր մը եղաւ, հակառակ որ այդ օր Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկները մրցումի ներկայացան իրենց թիւերուն վրայ սեւ երիզներ կրելով՝ յարգելու համար մեր մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը:

Այդ օր, Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի ֆուտպոլի խումբին վերջին մրցումն էր Աթէնքի ֆետերասիոնի երրորդ դասակարգին մէջ, «Փանկրաթի» խումբին դէմ: Խումբը արդէն ապահոված էր իր առաջնութիւնը ու կը բարձրանար երկրորդ դասակարգ:

Մրցումէն բաւական առաջ դաշտ փութացած էին 300-ի շուրջ Հ.Մ.Ը.Մ-ական մարզասէրներ՝ ծափահարելու համար խումբի մարզիկներուն մէկ տարուան ջանքը: Խումբը այս տարեշրջանի 26 մրցումներու ընթացքին արձանագրած էր 18 յաղթանակ, 7 հաւասարութիւն եւ 1 պարտութիւն:

Մրցումին ներկաներու շարքին էին Նէա Չմիռնիի փոխ քաղաքապետ եւ մարզական հարցերու պատասխանատու Փոլիտորաս Սիրիդոս եւ Նէա Չմիռնիի փոխ քաղաքապետ եւ մշակութային հարցերու պատասխանատու Վանկելի Խաչատուրեան:

Հասաւ մրցումին ժամը եւ պատահաբար ու կարմիր-կապոյտ փուլիկներով լեցուն դաշտին մէջ լսուեցան առաջին բացազանչութիւնները, որոնք զօրացան 15-րդ վայրկեանին, երբ Հ.Մ.Ը.Մ. նշանակեց յաղթանակի իր առաջին կոլը: Կիսախաղը վերջացաւ 4-0՝ ի



Հ.Մ.Ը.Մ-Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ ԿՐ ԲԱՐՉՐԱՆԱՅ ԱԹԷՆՔԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

նպաստ Հ.Մ.Ը.Մ-ին, իսկ խաղը աւարտեցաւ 6-0 արդիւնքով:

Մրցումին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ-ի ֆուտպոլի խումբի փոքրիկներուն մրցումը, ինչ որ օրուան խանդավառութիւնը հասցուց գագաթնակէտին:

Տօնակատարութեան բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի մասնաճիւղի ատենապետ եղբ. Ֆիլիփ Ծերոնեան: Եղբայրը ամփոփ զիծերով ներկայացուց

Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի ֆուտպոլի խումբին պատմութիւնը իր ստեղծման օրէն:

Այնուհետեւ, Նէա Չմիռնիի փոխ քաղաքապետ Վանկելի Խաչատուրեան յանձնեց մարզիկներուն մետալները: Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի պատուակալ նախագահ եղբ. Կարպիս Գուլումճեան յանձնեց ամէնէն շատ կոլեր նշանակած Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկին ֆետերասիոնի յուշամետալը: Շնորհաւորական խօսք արտասանեց Նէա Չմիռնիի փոխ քաղաքապետ Փոլիտորաս Սիրիդոս: Ան յայտնեց, որ Նէա Չմիռնիի քաղաքապետարանը միշտ պիտի գտնուի Հ.Մ.Ը.Մ-ի կողքին: Խօսքին աւարտին, ան Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկներուն յանձնեց ֆուտպոլի երրորդ դասակարգի առաջնութեան բաժակը:

Խանդավառ մթնոլորտը վերջ գտաւ դաշտին շուրջ մարզիկներու յաղթական տօնախմբութիւններով:







# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 90 ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔՈՒՄ

ղորդակից դարձնել օրուան խորհրդին, որն ամբողջացաւ Դրոյի շիրմի մօտ յաղթանակը կերտողներին՝ Շուշիի ազատագրման անմիջական մասնակիցների հետ զրոյց-դասախօսութեան շնորհիւ: Արշաւը շարունակուեց դէպի «Տառերի պուրակ», որին յաջորդեց այցը Սաղմոսավանք, որտեղ եւ հանդիսաւոր կերպով անցկացուեց 90 քոյր-եղբայրների երդման արարողութիւնը: Պատասխանատուութեան մեծ զգացումով եւ ամենաթանկ արժէքով՝ իրենց պատուով սկաուտները երդուեցին լինել հաւատարիմ Աստծուն, ծառայել Հայրենիքին, Ազգին... Խորհրդանշական այս արարողութեան շնորհիւ մեր հասարակութեան շարքերը համալրուեցին բարոյական բարձր արժանիքներով եւ ազգային նկարագրով, փոխ օգնութեան եւ ընկերասիրութեան ոգով դաստիարակուած պատանիներով ու երիտասարդներով:

## Թղթակից ԵՐԵՒԱՆ

**Մ**այիսեան յաղթական ոգին Բաշ Ապարանում ժողովեց Հայաստանի տարբեր մարզերից հաւաքուած հարիւրաւոր սկաուտներին... Արշաւը, որը մեկնարկեց վաղ առաւօտից, նպատակ ունէր սկաուտներին համալրուեցին բարոյական բարձր արժանիքներով եւ ազգային նկարագրով, փոխ օգնութեան եւ ընկերասիրութեան ոգով դաստիարակուած պատանիներով ու երիտասարդներով:



# ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔԸ



**Հ**ՄԸՄ-ՀԱՍԿ-ի սկաուտներն իրենց ներդրումն ունեցան գեղեցիկ եւ խորհրդանշական նախաձեռնութեան՝ «Ծաղկահաւաք»ի մէջ, որը միաւորել էր բազմաթիւ կամաւորների, ովքեր Ապրիլի 24-ի յաջորդող օրերին խնամքով տեսակաւորում էին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում հաւաքուած ծաղիկները՝ զանոնք նպատակային վերամշակման ենթարկելու համար:

Ներկայ սկաուտները քաջ գիտակցում էին, որ իւրաքանչիւր ծաղիկ իր մէջ ամփոփում է կորստի այն մեծ ցաւը, որը 1915 թ-ից ի վեր բոյն է դրել իւրաքանչիւր հայի հոգում...





Աթենք

# ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ԿԱՄՔՈՎ

Դիմատետրի համացանցային էջերին քաղուած եւ ստորեւ տրուած նկարները կը ներկայացնեն Հ.Ս.Ը.Մ.ի Ապրիլեան ոգեկոչումներու մասնակցութիւնը Հայաստանի, Յունաստանի եւ Պուլկարիոյ մէջ:



Ծիծեռնակաբերդ



Աթենք



Սոֆիա



Պուրկաս



Փլովտի



Mike's Photos

# Հ.Մ.Ը.Մ. Ի ԳԱՆԱՏԱՅԻ 40-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

## Տիրան Շահինեան ՄՈՆԹՐԵԱԼ

**Հ**.Մ.Ը.Մ-ի Գանատայի 40-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցավ 18-19 Մայիս 2013-ի շաբաթավերջին, Լաւալի մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Կէտիկեանի, Մոնթրէալի, Թորոնթոյի, Գէմպրիճի եւ Լաւալի լիազօր ներկայացուցիչներու: Ժողովին խորհրդակցական ձայնով մասնակցեցան քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ, որոնց կարգին՝ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Զոհրապ Կոստանեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, Գանատայի Ազգ. Վարչութեան անդամ եղբ. Գրիգոր Գոլյումճեան եւ Գանատայի ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Աննա Պուլկարեան:

Ժողովին բացումը կատարեց ընթացակարգ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հայկ Ակոբեան: Եղբայրը Շրջանային Վարչութեան անունով բարի գալուստ յայտնեց բոլորին, յոյս յայտնելով որ ժողովին տրուած որոշումները եւ ապագայ ծրագիրներու մշակումը մեծապէս կը ծառայեն Հ.Մ.Ը.Մ-ի վերելքին: Այնուհետեւ, օրակարգի քննարկման կէտերուն անցնելով,

ժողովը ընտրեց իր ղեկանը.- եղբայրներ Մոսիկ Թոփուզեան եւ Սեւակ Քիւփէլեան՝ ատենապետներ, քոյր Քաթիա Տէր Յովակիմեան եւ եղբ. Յակոբ Գարայեան՝ ատենադպիրներ:

Յաջորդաբար ընտրուեցան բանաձեւի, հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու անդամները, որոնք ժողովի համապատասխան օրակարգին ներկայացուցին իրենց զեկուցումները:



Բանաձեւի յանձնախումբը:

Երեք նիստերու ընթացքին ժողովը, նախ լսեց մասնաճիւղերու աշխատանքի մասին ամփոփ տեղեկագիրները, որոնցմէ պարզուեցաւ, թէ մարզական, սկաուտական եւ ընկերային ընթացիկ գործունէութեան առընթեր, մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ հանրանուէր ձեռնարկներու եւ ազգային տօնակատարութիւններու:

Նորագոյն տուեալներով, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի մասնաճիւղերը միասնաբար ունին 1591 անդամներ.- 704 հոգիէ բաղկացած սկաուտական կազմ եւ 518 երկսեռ մարզիկներ: Երջանը ունի ֆուտպոլի, պասքեթպոլի, ֆլոր հոքիի, աթլետիզմի, փինկ-փոնկի, ճատրակի, մարտարուեստի եւ ըմբշամարտի երկսեռ խումբեր:

Ներկայացուցչական ժողովը լսելէ ետք Երջանային Վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները, անոնց շուրջ կատարած հարցումներն ու պատասխանները, Երջանային Վարչութեան 2012-2013 տարեշրջանի գործունէութիւնը նկատեց «Գնահատելի»:

Ժողովի մնացեալ օրակարգով ներկաները քննարկեցին հետեւեալ նիւթերը.-

Սկաուտական օրակարգով, ժողովին փոխանցուեցան զեկոյցներ Երջանային Սկաուտ. Խորհուրդի, Երջանի խմբապետական ժողովի, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 6-րդ խմբապետական համագումարի (Հայաստան) մասին: Արժեւորումը կատարուեցաւ շրջանի միջ-մասնաճիւղային 6-րդ սկաուտական բանա-



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները. Արմէն Կէտիկեան:

կումին, որ տեղի ունեցաւ 14-22 Յուլիս, 2012-ին: Խօսուեցաւ ամերիկեան ցամաքամասի եւ Աւստրալիոյ շրջաններու խմբապետներու վերադարձուած ղարոց-բանակումի նախապատրաստական աշխատանքներու, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակումի (2014, Հայաստան), սկաուտական գիրքերու, Վկայեալ եւ Արարատեան կարգերու մասին:

Մարզական օրակարգով, արժեւորումը կատարուեցաւ շրջանի 42-րդ մարզախաղերուն, որոնք տեղի ունեցան 25-27 Մայիս 2012-ին, Գէմպրիճի մէջ: Խօսուեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9-րդ մարզախաղերու (Յուլիս 2013, Հայաստան) նախապատրաստական աշխատանքներուն եւ շրջանի 43-րդ մարզախաղերու մասին, որոնք տեղի պիտի ունենան 11-13 Հոկտեմբեր 2013-ին, Մոնթրէալի մէջ:

Կազմակերպչական օրակարգով, զեկոյցներ փոխանցուեցան միջ-դիւանական 8-րդ խորհրդաժողովին (Նիկոսիա, Կիպրոս) եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ռազմավարական ծրագրաւորման գործադիր յանձնախումբի յառաջիկայ աշխատանքներուն մասին: Քննուեցաւ շրջանի մասնաճիւղերու վիճակը, Հ.Մ.Ը.Մ.ի Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու հետ յարաբերութիւնը, արծարծուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակը փառաշուք հանդիսութեամբ տօնակատարելու ծրագիրը: Նշուեցաւ քարոզչութեան կարեւորութիւնը միութեան աշխատանքները հանրութեան ներկայացնելու իմաստով, յատկապէս օգտագործելով շրջանի «Հորիզոն» շաբաթաթերթը, միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթը, Մոնթրէալի եւ Թորոնթոյի պատկերասփիւռի հայկական բաժինները եւ կայքէջը:

Ապա, ժողովը որոշեց նիւթապէս ու բարոյապէս սատար հանդիսանալ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ շրջանին:

Երեք նիստերու ընթացքին ժողովականները օրակարգի բոլոր հարցերուն անդրադառնալէ ետք, իրենց շինիչ առաջարկներն ու բանաձեւերը ներկայացուցին նոր տարեշրջանի գործունէութեան համար:

Հուսկ, ժողովը ընտրեց 2013-2015 երկամեայ շրջանի Երջանային Վարչութեան կազմի անդամները՝ եղբայրներ Տիրան Շահինեան, Գրիգոր Ապրաքեան, Բաբգէն Կարապետեան, Բաֆֆի Հատիտեան, Ժանօ Սարխանեան, Սեւակ Քիւփէլեան եւ Սամսոն Քահքէճեան:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբայր Արմէն Կէտիկեան իր փակման խօսքով շնորհաւորութեան եւ յաջողութեան մաղթանքներ փոխանցեց եւ թելադրեց աշխատիլ միասնաբար, յատկապէս մեծ ուշադրութիւն դարձնելով գաղութէն ներս երիտասարդութեան ներգրաւման աշխատանքներուն:

Եղբայրական ջերմ միջնորդի մէջ, ժողովը վերջ գտաւ ժողովականներու կողմէ «Յառաջ նահատակ» քայլերգին խմբերգումով:





# ՄՈՆԹՐԷԱԼԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ» ՄԱՍՆԱԾԻՒԴԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

## Տ.Շ. ՄՈՆԹՐԵԱԼ



40-րդ Շրջ. ժողովին  
Մոնթրեալի ներկայացուցիչները:

Ժողովին մասնաճիւղի 9 ներկայացուցիչները:

Երրորդ նիստը գումարուեցաւ Շրջանային ներկայացուցչական ժողովի գումարումէն ետք:

Այս նիստին ժողովականները լսեցին ընդհանուր զեկոյց մը ներկայացուցչական ժողովի որոշումներուն մասին եւ ապա ընտրեցին 2013-2014 տարեշրջանի վարչութիւնը, որ իր ղեկանի կազմութե-

Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի 40-րդ Շրջանային ներկայացուցչական ժողովի նախօրեակին, Մոնթրեալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղը երեք նիստով գումարեց անդամական իր ընդհանուր ժողովը:



Առաջին նիստին անդամները լսեցին ընթացաւարտ վարչութեան եւ զոյգ խորհուրդներու, սկստական եւ մարզական, 2012-2013 տարեշրջանի գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը, որմէ ետք կատարեցին լուսաբանական հարցումներ:

Երկրորդ նիստին տեղի ունեցաւ վարչութեան գործունէութեան ըստ էութեան քննարկումը: Ժողովը ընթացաւարտ վարչութեան գործունէութիւնը նկատեց «Գնահատելի»:

Ապա, ընտրուեցան 40-րդ Շրջանային ներկայացուցչական

նէն ետք պարզեց հետեւեալ պատկերը.- քոյր Սօսի Տայեան ատենապետուհի, քոյր Սառա Եղիայեան ատենադպիր, եղբորաճիւղի Աբանեան գանձապահ, եղբայրներ Ճորճ Պալէոգեան, Ռիչրտ Մելքոնեան, Գօգօ Օհաննէսեան եւ Վահէ Թաշճեան խորհրդականներ:

Մասնաճիւղի վարչութիւնը առաջին առիթով նշանակեց մասնաճիւղի սկստական եւ մարզական խորհուրդները եւ նոր եռանդով սկսաւ իր գործունէութեան:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home,  
away from home...

**Yerevan**  
32-38, Hanrabadoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

Reservations

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ՏՈՂԱՆՑՔ՝ ՍԻՏՆԻԻ ՄԷՉ

## Յովհաննէս Մարտոյեան ՍԻՏՆԻ

**Հ**այաստանի անկախութեան 95-ամեակին նըւիրուած տողանցքը տեղի ունեցաւ Կիրակի, 19 Մայիս 2013-ի կէսօրէ առաջ: Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական բոլոր կազմերը, Հայաստանի առաջին ազատ ու անկախ Հանրապետութեան ստեղծման 95-րդ տարեդարձին առիթով, ուղղուեցան Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցի, ուր ներկայ եղան Պատարագի հոգեպարար արարողութեան, վերանորոգելով իրենց ուխտը եւ ստանալով Ս. Հաղորդութիւն:

Յաւարտ Պատարագի, Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեան իր քարոզին մէջ անդրադարձաւ սկաուտներու ներկայութեան, շեշտը դնելով սկաուտութեան «Մի՛շտ պատրաստ» նշանաբանին վրայ, սկաուտական դաւանանքէն տալով քանի մը կէտեր: Ան ըսաւ, որ սկաուտին առաջին ծառայութիւնը Աստուծոյ է: Սկաուտը պատրաստ է ծառայելու հայրենիքին եւ ասիկա գիտակցութիւն եւ ամբողջական նուիրում կը պահանջէ: Սկաուտը նաեւ պատրաստ է ծառայելու ամբողջ մարդկու-

թեան,- շարունակեց ան,- երբ որ հաւատարիմ ենք մեր ծնողներուն, յարգանք ունինք մեր մեծերուն նկատմամբ, այդ կը նշանակէ որ նաեւ մենք յարգանք ունինք ամբողջ մարդկութեան:

Պատարագէն ետք, դրօշակակիրներ բարձր բռնած Աւստրալիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները, թմբկահարներու խորխտ եղանակներու կշռոյթով, սկաուտական խումբերը առաջնորդեցին մինչեւ Հայ Մշակութային Կեդրոն: Մեծ թիւով ծնողներ ու Հ.Մ.Ը.Մ-ականներ հետեւեցան տողանցող Հ.Մ.Ը.Մ-ական սերունդին: Հայ Մշակութա-

յին Կեդրոնի սրահին մէջ գործադրուեցաւ պատշաճ յայտագիր: Շրջանային խմբապետ եղբ. Արա Պոյաճեան հրաւիրեց ներկաները յոտնկայս ունկնդրելու Աւստրալիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները եւ խոնարհելու հայրենիքի ազատութեան համար իրենց կեանքը նուիրաբերած նահատակ հերոսներու յիշատակին: Եղբ. Պոյաճեան բարի գալուստի իր խօսքին ընդմէջէն անդրադարձաւ օրուան խորհուրդին՝ Մայիս 28-ի պատմական նշանակութեան եւ հայ ժողովուրդի միասնական գոյապայքարին:





Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Տիրան Վահրատեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Սիտնիի շրջանի սկաուտութեան համար սովորութիւն դարձած է Մայիս ամսուան երրորդ Կիրակին այցելել եկեղեցի, Հաղորդութիւն ստանալ եւ տողանցել դէպի Հայ Մշակութային Կեդրոն, ուր գեղարուեստական յայտագիրով կը նշուի Մայիս 28-ի անկախութեան յիշատակը:

Հայ սկաուտը, ընդգծեց ան, կը շարունակէ Հ.Մ.Ը.Մ-ի սրբազան առաքելութիւնը Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, պատրաստելու ազգասէր, հայրենատենչ եւ անկախու-



թեան արժէքին գիտակից երիտասարդներու կամաւոր բանակ: Այսպէս կը գործէ Հ.Մ.Ը.Մ-ը, հպարտ քայլերով, միշտ նոր ծրագիրներով, եւ պիտի շարունակէ իր առաքելութիւնը՝ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ-ի հօր կամքին, կորովին ու հաւատքին:

Իր խօսքին մէջ, եղբ. Վահրատեան շեշտեց, որ «Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ-ականի իրաւունքն է բարձրանալ, իսկ բարոյական պարտքն է բարձրացնել իր շուրջինները: Այդպէս է որ արձանագրուած են յաջողութիւնները տարբեր մարզերու մէջ:

«Բարձրացի՛ր՝ բարձրացուր»ը մնայուն ձգտումն է իւրաքանչիւր Հ.Մ.-

Ը.Մ-ականի, անոր կեանքի ընթացքը եւ գործունէութեան ուղեցոյցը»:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեան ողջունեց Շրջանային Վարչութեան ազգաշահ այս նախաձեռնութիւնը, շնորհաւորեց ներկաները հայ ժողովուրդի մեծ յաղթանակին եւ հայրենիքի անկախութեան տարեդարձին առիթով, մաղթեց, որ Մայիս 28-ի ոգիով, անդուլ հաւատքով, միշտ կենսունակ, միշտ թարմ պահենք հայու ազատատենչ ոգին:

Օրուան պատգամը երկու լեզուով փոխանցեց «Արարատ» մասնաճիւղի խոստմնալից երիտասարդ խմբապետ եղբ. Մարտիկ Պէրպէրեան:

Եղբայրը յայտնեց, որ իբրեւ հայ, մենք չենք կրնար մոռնալ մեր անցեալը, չենք կրնար ներել անոնց, որոնք փորձեցին ոչնչացնել մեր ազգը, բայց կրնանք նշել մեր գոյութիւնը եւ հպարտանալ մեր անցեալով: Պատմութեան հետեւելով, զանազան ցեղեր ապրած եւ բնաջնջուած են ժամանակի ընթացքին, բայց մեր ազգը մինչեւ օրս կը գոյատեւէ եւ կը ծաղկի: Նայելով մեր շուրջը, մօտաւորապէս բոլոր երկիրներու մէջ ունինք հայկական գաղութներ, ունինք եկեղեցիներ, վարժարաններ, ճեմարաններ, մշակութային ու մարզական կեդրոններ, զանազան բնօրէն միութիւններ, որոնք կը փաստեն մեր հայ ազգին վերապրումի եւ զարգացումի կամքը:

Եղբայրը իր պատգամը փակեց ըսե-





լով. «Զեռք-ձեռքի տանք ու տօնենք մեր բոլորին անկախութեան օրը, յիշենք բոլոր նահատակները, բոլոր հերոսները, որոնք իրենց կեանքը տուին Ազատ ու Անկախ Հայրենիք կերտելու համար, ամէնէն կարեւորը եկէք շարունակենք այդ գործը, զոր մեզի կանխած սերունդները հետապնդած են, մեր կար-

գին զայն փոխանցելու համար մեզի յաջորդող սերունդներուն»:

Խօսքերէն ետք, սկսուտական խումբերը ելոյթ ունեցան խանդավառ կանչերով, խմբերգներով եւ ասմունքներով: Պաշտօնական բաժինը վերջ գտաւ «Ով հայ արի» սկսուտական քայերգի երգեցողութեամբ, որուն յաջորդեց

ճաշկերոյթը: Սեղանակիցներ, գուարճալի մեծ ու փոքր անակնկալներով, ստեղծեցին գուարթ ու շէնչող մթնոլորտ, որուն ընդմէջէն անոնք փառաւորեցին հայ ժողովուրդի ազատ ու անկախ ապրելու, մանաւանդ գոյատեւելու անընկճելի կամքը, Մայիս 28-ի Մեծ Յաղթանակը:

PINK  
Kimberley  
AUSTRALIA

[PinkKimberley.com.au](http://PinkKimberley.com.au)

*Diamonds beyond rare*

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ ԻՐ ԲԱԶՄԵՐԵՍ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՄԲ ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ ԿԸ ՄՆԱՅ ՀԱՍՏԱՏ



## Ձեռնարկը ՊԱՂՏՍ

**Հ**ՄԸՄ-ի Պաղտատի մասնաճիւղը հիմնուած է 4 Դեկտեմբեր 1949-ին: Ան եղած է Իրաքի երրորդ մարզական սկուլարներէն մէկուն մէջ, ունենալով Ֆուլթայլի խումբ մը:

1959-ին, միութիւնը կը փոխադրուի Քասր Ալ Ապիատի մօտակայքը, Պատուին շրջանը: Հոս նոր գարկ կը տըրւի միութեան մարզական խաղերուն՝ Ֆուլթայլի խումբի կողքին յառաջացնելով պասքեթպոլի, վոլիպոլի, հենտպոլի եւ փինկ-փոնկի խումբեր: Մարզական խումբերու զուգահեռ կը ստեղծուի սկաուտական շարժում:

1984-ին, միութիւնը կը փոխադրուի իր ներկայի կեդրոնը, Փարք Ալ Սաատուն կոչուած շրջանը, 9000 քառ. մեթր տարածութեան վրայ: Այնուհետեւ, կեդրոնը Պաղտատի հայութեան համար

կը նկատուի մարզական, սկաուտական եւ ընկերային գլխաւոր կեդրոն՝ 194 անդամ-անդամուհիներով, 150 մարզիկներով եւ 120 սկաուտներով:

2012-ին, միութեան վարչական հիմնական եւ լրացուցիչ ընտրութիւններուն եւ ըստ Իրաքի երիտասարդութեան նախարարութեան պատկան գրասենեակի վաւերացումին, նորընտիր վարչութեան կազմը կը յառաջանայ հետեւեալ ձեւով:-

Եղբ. Դրօ Պօղոսեան- ատենապետ  
Եղբ. Կարապետ Գալուստեան- փոխ ատենապետ

Եղբ. Արիս Մելքոնեան- ատենադպիր  
Եղբ. Լեւոն Խաչատուրեան- հաշուապահ

Եղբ. Անդրանիկ Նահապետեան, քոյր Անիթա Իշխանեան, եղբ. Արծրունի Պետրոսեան, եղբ. Մասիս Քալըրճիկեան, եղբ. Պօղոս Քալըրճիկեան, եղբ. Բաֆֆի Թովմասեան եւ եղբ. Վաղինակ Վահանեան- խորհրդականներ

Հ.Մ.Ը.Մ-ի Պաղտատի կեդրոնը կ'ընդգրկէ՝

1) Թարթանով սարքուած փակ սըրահ, որ կը գործածուի պասքեթպոլի, վոլիպոլի, պատմինթընի եւ փինկ-փոնկի խաղերու համար, կահաւորուած՝ մարզիկներու համար յատուկ սենեակներով, բաղնիքներով, վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդի գրասենեակներով:

2) Թարթանով սարքուած պասքեթպոլի, վոլիպոլի եւ հենտպոլի բացօթեայ դաշտ:

3) Պատմինթընի բացօթեայ դաշտ:

4) Թենիսի բացօթեայ դաշտ:

5) Ֆուլթայլի հինգ բացօթեայ դաշտեր:

6) Սուսերամարտի փակ սրահ:

7) Մարմնամարզի փակ սրահ:

8) Ընտանեկան հաւաքոյթներու եւ խնճոյքներու փակ սրահ:

9) Խանութ եւ քաֆիթերիա:

10) Սկաուտական եւ մարզական գոյքերու երեք պահեստանոցներ:

11) Տեղեկատուութեան գրասենեակ:

12) Բաղնիքներ (տղոց ու աղջկանց):

13) Ինքնաշարժներու կառուտուն:

Միութիւնը ներկայիս կը կիրարկէ 11 մարզածեւ՝ հետեւեալ խումբերով:-

1) Աթլէթիզմ- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

2) Պասքեթպոլ- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

3) Փինկ-փոնկ- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

4) Պատմինթըն- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

5) Ճատրակ- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

6) Թենիս- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

7) Պոլինկ- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

8) Սուսերամարտ- տղոց եւ աղջկանց, բոլոր տարիքներու

9) Վոլիպոլ- աղջկանց խումբեր, բոլոր տարիքներու

10) Ծովեզերեայ վոլիպոլ- աղջկանց խումբ

11) Ֆուլթայլ (5-ական)- տղոց խումբ Իրաքի մարզական 142 ակումբներու շարքին, երկրի երիտասարդութեան նախարարութեան շահանիչներուն համաձայն, Հ.Մ.Ը.Մ. Պաղտատ կը գրաւէ պատուաբեր վեցերորդ դիրքը:

## ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻԾԵՐ

**Ա) Մնայուն**  
- Մարզական խումբերը շաբաթը 5 անգամ կը կատարեն փորձեր:



- Սկաուտական հաւաքոյթները կը կատարուին շաբաթը մէկ անգամ:  
- Ընտանեկան հաւաքոյթները եւ վիճակահանութեան խաղերը կը կատարուին շաբաթը մէկ անգամ:

## Բ) Մարզական եւ Ընկերային

1) Միութեան մարզական խումբերը կը մասնակցին Իրաքի պաշտօնական բոլոր մրցումներուն, անոնցմէ մաս մը հիւրընկալելով իրենց դաշտերուն վրայ: Կարգ մը խումբեր կը գրաւեն իրենց մարզածեւի երկրի առաջնակարգ դիրքերը, օրինակ՝ աղջկանց սուսերամարտի, աթլէթիզմի, թենիսի, ծովեզերեայ վոլիպոլի եւ պոլինկի երկսեռ խումբերը:

2) Միութիւնը կը կազմակերպէ զանազան մրցումներ՝ յատկացուած միայն միութեանական անդամներու:

3) Կը կազմակերպէ ընտանեկան հաւաքոյթներ՝ Փետրուար 18-ի, Մարտ 21-ի, Մայիս 28-ի եւ Սեպտեմբեր 21-ի առիթներով:

4) Կը կազմակերպէ տարեկան եռօրեայ մարզահանդէս: Անցնող տարի, մարզահանդէսը կատարուեցաւ 11-13 Հոկտեմբերին եւ նուիրուեցաւ հայ սկաուտութեան 100-ամեակին: Նման ձեւերով կը մասնակցին Իրաքի հայաշատ բոլոր քաղաքներէն մարզական խումբեր (Պաղտատ, Պասրա, Մուսուլ, Քէրքուկ, Էրպիլ եւ Հաւրէզք): Մարզահանդէսներուն, մարզական զանազան խաղերու կողքին, տեղի կ'ունենան սկաուտական տողանցքներ:

## Գ) Սկաուտական

Շաբաթական հաւաքոյթներու կողքին, միութիւնը անցնող տարի կազմակերպած է՝

- Սկաուտական բանակում՝ 9-11 փետրուարին:

- Սկաուտական հնգօրեայ պտոյտ՝ դէպի Իրաքի հիւսիսային հայաշատ քաղաքները:

- Միօրեայ քանի մը բանակումներ՝ ի պատրաստութիւն Հոկտեմբերի մարզահանդէսին սկաուտական ելոյթներուն:

- Ամանորի առիթով՝ մոկիներու, գայլիկներու եւ Հ.Մ.Ը.Մ-ի մնացեալ փոքրիկներու յատուկ հանդէս եւ նուէրներու բաշխում:

Եւ մասնակցած է՝

- Վարդանանց տօնին առիթով, Ս. Գրիգոր Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Պատարագին:

- Ապրիլ 24-ի 97-րդ եւ 98-րդ տարելիցներուն առիթով՝ Ս. Գրիգոր Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Պատարագին եւ ոգեկոչման հանդէսին՝ մաս կազմելով արտասանութիւններուն, մեներգներուն, խմբերգներուն, թուրքիկներ պատրաստելով ու բաժնելով եւ պատշաճ ծաղիկեպսակ զետեղելով Ցեղասպանութեան խաչքարին դիմաց:

- Սկաուտական երգչախումբը մաս կազմած է Հայաստանի առաջին եւ երկրորդ անկախութեան առիթով կազմակերպուած հանդէսներուն՝ Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզին եւ Հ.Ե.Ս. սրահին մէջ:



# ԳԾԱՔԱՇԸ



**Պատրաստեց՝ Շաղիկ  
Գեորգեան  
ՊԷՅՐՈՒԹ**



**Դ**պրոցականներու գրենական իրերուն մէջ կարելոր տեղ ունի գծաքաշը, զոր մանկապարտէզէն կը սկսինք գործածել: Ինչպէս այլ իրեր, գծաքաշը եւս ունի իր ստեղծման պատմութիւնը: Հին Պոմպէի աւերակներէն յայտնաբերուած տաշուած տախտակները կը վկայեն, որ գծաքաշը բաւական «ծեր» է: Կ'ըսուի, թէ միջին դարերուն վանա-

կաններու կողմէ յայտնաբերուած է գծաքաշը, որուն վրայ եղած են գծիկներ: Եւրոպական երկիրներու մէջ յայտնաբերուած գծաքաշները շինուած են մետաղեայ լարերէ: Իսկ այսօրուան գծաքաշները յայտնուած են ֆրանսական յեղափոխութենէն ետք (1789): Այդ օրերուն, գիտնականներ զբաղած են գծաքաշի նոր տեսակներ ստեղծելով ու զարգացնելով: Անոնք կը հաշուէին, կը մտածէին, կը վիճաբանէին...: Վերջապէս, անոնք կ'որոշեն գծաքաշը բաժնել սանթիմետրերու եւ միլիմետրերու:

Ֆրանսացիները նախ ստեղծեցին գծաքաշի երկու տեսակ: Անոնք

փլաթինէ էին՝ մէկ մետր երկարութեամբ եւ քսանհինգ միլիմետր լայնքով: Յետոյ սկսան գծաքաշներ պատրաստել ծառերէն, բայց չենք գիտեր ինչո՞ւ այս գծաքաշները կը գործածէին միայն գիտնականները: Շրջան մը ետք, գծաքաշ սկսան գործածել նաեւ ուսանողները, աւելի ուշ՝ 19-րդ դարուն նաեւ աշակերտները: 1812 թուականին ֆրանսական գծաքաշները հասան Ռուսիա, հոնկէ ալ այլ երկիրներ, նաեւ՝ Հայաստան:

# ԾԻՐԱՆԵՆԻՆ

**Ծ**իրանենին վարդագգիներու ընտանիքին պատկանող պտղատու ծառ մըն է, պտուղը կը կոչուի ծիրան: Հայրենիքը Հայաստանն է: Գառնիի եւ Շէնգաւիթի պեղումներու ժամանակ յայտնաբերուած են ծիրանենիի կուտեր, որոնք ունին մօտ վեց հազար տարուան հնութիւն: Կայ ծիրանենիի ութ տեսակ: Ան միատունկ բոյս է: Բարձրութիւնը 6-12 մետր է, տերեւները խոշոր են եւ կլոր, ծաղիկները երկսեռ են՝ ճերմակ կամ բաց վարդագոյն, պտուղը մսոտ է եւ հիւթեղ, կորիզապտուղ է՝ տարբեր ձեւերով եւ մեծութեամբ: Կը պարունակէ շաքար, օրկանական թթու եւ կենսանիւթեր: Մշակուած տեսակներու հիմնական մասի կորիզին միջուկը քաղցր է: Ծիրանը կ'ուտեն թարմ վիճակով, ծիրանէն կը պատրաստեն չիր, հիւթ, անուշ, օղի եւ այլն:





2

Իերը ձիազգիներու ընտանիքի կենդանիներ են: Անոնք խոշոր են (իրանի երկարութիւնը մինչեւ 2.5 մ. է, բարձրութիւնը՝ մինչեւ 1.6 մ.): Ձարգացած է անոնց միջին մատը (սմբակ) միայն: Ձիերու մագածակը խիտ է, մագերը՝ կարճ (երկար են միայն պարանոցի վերին եւ պոչի հատուածներու մագերը): Վայրի ձիերու կը հանդիպինք Ասիոյ եւ Աֆրիկէի տափաստաններուն, կիսանապատներուն եւ անապատներուն մէջ: Անոնք կ'ապրին երեմականերով:

Ձիերը կը բաժնուին 8 տեսակի՝ խմբաւորուած 4 ենթասեռի մէջ. իսկական, էշեր, կիսաէշեր, վագրաձիեր:

Ընտանի ձիերը տարածուած են գրեթէ բոլոր երկիրներու մէջ: Մարդը հնագոյն ժամանակներէն կատարելագործած է ձիերու որակական յատկանիշները եւ ստեղծած է 200 տարբեր ցեղեր՝ միաւորուած 3 հիմ-

նական տեսակներու մէջ. հեծկաններ, լծկաններ եւ ծանրաքարչներ: Ձիերը կ'ապրին 25-30 տարի:

Ընտելացած ձին երկար ժամանակ եղած է մարդու մշտական օգնականը երկրագործական ու փոխադրական աշխատանքներու մէջ: Քսաներորդ դարու առաջին կէսին, գիւղատնտեսական արտադրութեան մեքենայացման եւ փոխադրամիջոցներու զարգացման պատճառով, աշխարհի ձիերու թիւը պակսած է գրեթէ կէսով:

Այսօր, մեծ քանակութեամբ ձիեր կը բուծանուին ձիարշաւարաններու եւ զբօսաշրջութեան զարգացման, միս ստանալու, բժշկութեան եւ անասնաբուժութեան մէջ գործածուող նիւթեր արտադրելու նպատակով:


Հայաստանի մէջ նշանաւոր է



Ղարաբաղեան ձին. ան լեռնային հեծկան ձիերու ցեղէն է, որ ստեղծուած է հնագոյն ժամանակներուն, Կուր եւ Արաքս գետերու միջեւ տարածուած շրջանին մէջ: Հայոց այրուձիի կազմին մէջ ան յայտնի էր որպէս լաւագոյն հեծկան: Ղարաբաղեան ձին արտահանուած է Իրան, Ֆրանսա, Լեհաստան եւ այլ երկիրներ:

## ՄԻ ՎՅԱՑԻՔ ԵՐԵ ՎԵՐՁԻՆՆ ԷՔ...

Բրիտանական Սանտրըլէնտ քաղաքին մէջ վերջերս կազմակերպուած է մարաթոն մը, որուն մասնակցած է 5000 հոգի: Կազմակերպիչներու թերացման պատճառով, սակայն, մարաթոնին ճամբան ճիշդ չէ նախագծուած: Մարաթոնին մասնակիցներէն 4999-ը վազած են սխալ ուղղութեամբ, իսկ միայն մէկը, որ ետ մնացած էր ու չէր գիտեր, թէ ո՞ր ուղղութեամբ կը վազեն բոլորը, ճիշդ ուղղութեամբ վազելով յաջողած է հասնիլ եզրագիծ եւ հռչակուած է յաղթական:



## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

4			3	6				8
	6	8		7		2	9	
	3						6	
		7		6		9		
6			8	5				2
		5		3		3		
	7						1	
	1	6		9		8	4	
9			1	8				7

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

### Նախորդին լուծումը

3	6	1	5	4	2	8	7	9
2	7	4	9	6	8	1	5	3
9	8	5	7	3	1	4	6	2
1	9	8	6	2	5	3	4	7
7	5	2	3	1	4	9	8	6
6	4	3	8	7	9	2	1	5
5	1	7	2	8	3	6	9	4
8	3	6	4	9	7	5	2	1
4	2	9	1	5	6	7	3	8

Պատասխանը՝ յաջորդիւ



**ՅԻՇԵԼ**

**ՅԻՇԵՑՆԵԼ**

**ՊԱՀԱՆՋԵԼ**

